

# № 84

Հիմնադիր և հրատարակիչ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԴԱՏԱԽԱՁՈՒԹՅՈՒՆ

# ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԴԱՏԱԽԱՁՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԳԵՍ

## ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Ե 1997 ԹՎԱԿԱՆԻՑ

**Էմիլ Բաբայան** ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, Հայաստանի ամերիկյան համալսարանի իրավագիտության ֆակուլտետի դասախոս, (խորհրդի նախագահ)

**Թամարա Շաքարյան** ՀՀ գլխավոր դատախազության իրավական ապահովման և եվրախնտեզրման բաժնի պետ, իրավ. գիտ. թեկնածու, ՀՀ կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի դասախոս, (գլխավոր խմբագիր)

**Դավիթ Մելքոնյան** ՀՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ,

**Միեր Հակոբյան** ՀՀ գլխավոր դատախազության իրավական ապահովման և եվրախնտեզրման բաժնի դատախազ, իրավ. գիտ. թեկնածու

**Գևորգ Դանիելյան** ՀՀ սահմանադրական դատարանի խորհրդական, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Սահմանադրական ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

**Վահրամ Շահինյան** ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ, իրավ. գիտ. թեկնածու (համաձայնությամբ)

**Հովհաննես Սրեփանյան** ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

**Գառնիկ Սաֆարյան** ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

**Արման Թաթոյան** ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

**Ռուբեն Մելիքյան** Արդարադատության ակադեմիայի ուսուցիչ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

## Գլխավոր խմբագիր՝ Թ. ՇԱԶՄՐՅԱՆ

խմբագրության հասցեն.  
375010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5  
Հեռախոս՝ 511 530, ֆաքս՝ 585 152  
Էլ. հասցե՝ orinakanutyun@genproc.am  
www.genproc.am  
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը,  
ոճը, տառաձևերը և էջադրումը՝  
«ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ»

Հանձնված է արտադրության  
29.09.2014 թ.  
Ֆորմատ՝ 70x100 1/16  
Տպաքանակը՝ 500  
Ծավալը՝ 8 պայմ. մանուկ  
Գրանցման վկայական N 688

Տպագրված է  
«Պոլիգրաֆ բիզնես» ՍՊԸ տպարանում  
Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ», 2014 թ.

# 2014

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.) աստեղախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

**«ՄԵՆՔ ԲՈԼՈՐՍ ԿՈՉՎԱԾ ԵՆՔ ԱՊԱՅՈՎԵԼՈՒ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ»**

ՀՀ գլխավոր դատախազ, արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական, իրավաբանական գիտությունների թեկնածու, Գևորգ

ԿՈՍՏԱՆՅԱՆԻ ելույթը ՀՀ դատախազության 96-ամյակին նվիրված հանդիսավոր նիստում:



Շնորհավորելով մասնագիտական տոնի առթիվ՝ ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանը շնորհակալություն հայտնելով բոլոր դատախազներին և դատախազական անձնակազմին ամբողջ ներուժով աշխատելու համար, վստահություն հայտնեց, որ հաջորդ տարի առիթ և հիմք կլինի արձանագրելու և ավելի ընդգծելու այն աշխատանքը, որը կատարվել և կատարվում է:

«Մենք բոլորս կոչված ենք ապա-

հովելու օրինականությունն ու արդարությունը, և դա մեր գործունեության հիմնական անշեղ սկզբունքն է: Ես համոզված եմ, որ այդ սկզբունքի հետևողական իրականացումը ուղղակիորեն կհանգեցնի աշխատանքի արդյունավետությանը և երկրում օրինականության և արդարության երաշխավորմանն ու առավել ամրապնդմանը» - իր խոսքում նշեց ՀՀ գլխավոր դատախազը:

Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատողի օրվա առթիվ Հայաստանի Հանրապետության Նախագահի ուղերձը ընթերցեց Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Վարդան ՍԱԿԱՐՅԱՆԸ:



**Հ Հ Ն Ա Մ Ա Գ Ա Տ  
Ս Ե Ր Ժ Ս Ա Ր Գ Ս Յ Ա Ն Ի  
Շ Ն Ո Ր Հ Ա Վ Ո Ր Ա Վ Ա Ն  
ՈՒՂ ԵՐՁԸ**

«Հարգելի՛ դատախազներ,

Դատախազության հարգելի՛ աշխատակիցներ,

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Դատախազության աշխատողի օրվա Հայաստանի Հանրապետության դատախազությունը երկար ճանապարհ է անցել և այսօր էլ ընթանում է արդիականացման ճանապարհով: Գոհունակությամբ պետք է նկատել, որ դուք ինքներդ եք բացահայտում համակարգում առկա թերություններն ու բացթողումները և հրապարակայնորեն խոսում դրանց վերացման անհրաժեշտության մասին:

Դատախազությունը համալրվում է նոր մտածողությամբ օժտված, բանիմաց ու գիտակերիտասարդ իրավաբաններով, ուլքեր, ավագ սերնդից փոխառելով փորձ ու հմտություն, ի զորու են կենսագործելու Սահմանադրությամբ ամրագրված դատախազական լիազորությունները և հաջողությամբ դիմագրավելու արդի մարտահրավերներին:

Անհրաժեշտ է այսուհետև ևս շարունակել և ավելի բարելավել հանցավորությանը դիմակայելու, մարդու իրավունքների պաշտպանության, ժողովրդավարական արժեքների ամրապնդման, կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության ապահովման ուղղությամբ տարվող աշխատանքները:

Համոզված եմ, որ սկզբունքայնությամբ ու մասնագիտական պատվախնդրությամբ, կուտակված փորձով և աշխատանքի կազմակերպման նոր մոտեցումներով կկարողանաք արդյունավետ լուծել համակարգի առջև դրված բարդ ու դժվարին խնդիրները:

Կրկին շնորհավորելով մասնագիտական տոնի առթիվ՝ մաղթում եմ ձեզ նոր ձեռքբերումներ դատախազական դժվարին ծառայության մեջ, առողջություն և երջանկություն ձեզ և ձեր ընտանիքներին»:

**Դատախազության աշխատակիցներին շնորհավորեց և պարգևներ հանձնեց ՀՀ ԱԺ նախագահ Գալուստ ՍԱՀԱԿՅԱՆԸ**

Շնորհավորելով մասնագիտական տոնի կապակցությամբ՝ ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանն ասաց.



«Հայաստանի դատախազությունը կարևոր դեր ունի երկրի հասարակական ու պետական կյանքում: Անցած տարիների ընթացքում փոխվել է համակարգի աշխատողների մի քանի սերունդ, սակայն դատախազությունը մշտապես հավատարիմ է մնացել լավագույն ավանդույթներին: Միաժամանակ, արդի պահանջներին համապատասխան, հստակեցվել են դատախազության լիազորությունները և գործառույթները: Այսօր դատախազության համակարգը համաչափ զարգացում է ապրում՝ ականջալուր լինելով ժամանակի մարտահրավերներին: Արագ զարգացող աշխարհը պարտադրում է օպերատիվ արձագանք, և դատախազությունն այդ առումով բացառություն չէ: Համակարգի աշխատակիցները հաջողությամբ են համադրում գիտելիքներն ու փորձը, ժամանակակից մեթոդներն

ու տեխնոլոգիաները, համակարգի երեկվա ու այսօրվա ավանդույթներն ու ձեռքբերումները՝ արժանապատվորեն լուծելով իրենց առջև դրված խնդիրները:

Ձեր սկզբունքային և հետևողական աշխատանքով է պայմանավորված մեր երկրում օրինականության պահպանումը, հասարակության անվտանգության ապահովումը, քաղաքացիների և պետության օրինական շահերի ու իրավունքների հուսալի պաշտպանությունը, հանցավորության դեմ անզիջում պայքարի իրականացումը:

Հարգելի բարեկամներ,

Այսօր դատախազությունն իր գործունեությամբ ակտիվ մասնակցություն է ունենում հասարակական հարաբերությունների ձևավորման մեջ, որում մեծ դեր է վերապահված դատախազության իրավապաշտպան գործառույթին:

Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքներն ու ազատությունները իրավական պետության բարձրագույն արժեքներն են, և սահմանադրական այս սկզբունքի պահպանումը զգալիորեն պայմանավորված է նաև դատախազական համակարգի աշխատանքով: Դատախազությունն ու քաղաքացին պետք է հանդես գան որպես դաշնակիցներ այն բոլոր արատավոր երևույթների դեմ պայքարում, որոնք ոչ միայն անհարիր են մեր հասարակությանն ու մեր արժեհամակարգին, այլև խոչընդոտ են պետության առաջընթացի համար:

Ձեր արդյունավետ և արհեստավարժ գործունեությունը հնարավորություն է տալիս ավելի անրապնդել իրավական պետության և քաղաքացիական հասարակության հիմքերը, հասնել նոր հաջողությունների՝ հանուն իրավունքի գերակայության և սոցիալական արդարության:

Ազգային ժողովի և դատախազության համակարգի միջև համագործակցությունը և ձևավորված ավանդույթներ ունի՝ համապատասխան օրենսդրական դաշտի ստեղծման և կատարելագործման ուղղությամբ:

Ցանկանում եմ հավաստիացնել, որ խորհրդարանը հետայսու ևս պատրաստակամ է զորակցելու ոլորտի օրենսդրական կատարելագործմանը միտված նախաձեռնություններին ու քայլերին:

Մեկ անգամ ևս շնորհավորելով դատախազության 96-ամյակի և դատախազության աշխատողի օրվա առթիվ՝ նաղթում եմ ձեզ առողջություն, ընտանեկան երջանկություն և հաջողություններ ձեր պատասխանատու գործունեության մեջ»:

**Ծառայողական պարտականությունները պատշաճ կատարելու համար և դատախազության աշխատողի օրվա կապակցությամբ ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանը պարգևատրեց.**

ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչության պետ Վահագն ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ, Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության դատախազ Սասուն ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ, թիվ 2 կայազորի զինվորական դատախազ Արայիկ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ:







Մասնագիտական տոնի առթիվ ՀՀ վարչապետ Հովիկ ԱՐՐԱՅԱՍՅԱՆԻ շնորհավորական խոսքը ներկաներին հղեց ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն ԳԵՎՈՐԳՅԱՆԸ, և ծառայողական պարտականությունները պատշաճ կատարելու համար դատախազության որոշ աշխատակիցներ պարգևատրվեցին.

### ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանի որոշմամբ պարգևատրվել են.

ՀՀ վարչապետի հուշամեդալով պարգևատրվել է երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազ Սիսակ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ: ՀՀ վարչապետի շնորհակալագրով խրախուսվել են Տավուշի մարզի դատախազ Տիգրան ՍԱՐԳՍՅԱՆԸ և թիվ 1 կայազորի զինվորական դատախազ Նիկոլայ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ:

Մասնագիտական տոնի առթիվ ելույթներ ունեցան և պարգևներ հանձնեցին նաև ՀՀ Կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայության տնօրեն Գորիկ Հակոբյանը, ոստիկանության պետ Վլադիմիր Գասպարյանը, Արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանը, ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Արա Նազարյանը, Հատուկ քննչական ծառայության պետ Վահրամ Շահինյանը, ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Արման Սկրտունյանը:





ՀՀ ոստիկանության պետի կողմից՝ Երևան քաղաքի դատախազ Արթուր ԴԱՎԹՅԱՆԸ, Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազ Հայկ ԱՍԼԱՆՅԱՆԸ. Գեղարքունիքի մարզի դատախազ Արսեն ԱՐՍԵՆՅԱՆԸ, Լոռու մարզի դատախազ Գրիգոր ԷԼԻՉԲԱՐՅԱՆԸ և ՀՀ գլխավոր դատախազության ՀԿԳ քննության վարչության ավագ դատախազ Դավիթ ՎԵՔԻԼՅԱՆԸ:



ՀՀ պաշտպանության նախարարի կողմից՝ ՀՀ զինվորական դատախազի տեղակալ Արսեն ՍԱՐԴԱՐՅԱՆԸ, ՀՀ զինվորական դատախազի տեղակալ Արտակ ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆԸ և ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության քրեական հետապնդման ոլորտում կայազորների զինվորական դատախազությունների գործունեությունը վերահսկող բաժնի դատախազ Բորիս ԲԱՆՇԻՅԱՆԸ:



ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի կողմից՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Արամ ԹԱՄԱԶՅԱՆԸ, ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող և կիբերհանցագործությունների գործերով վարչության պետ Արթուր ԳՈՅՈՒՆՅԱՆԸ, ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող և կիբերհանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ Արմեն ՓԱՆՈՍՅԱՆԸ:



ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի կողմից՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Արամ ԹԱՄԱԶՅԱՆԸ, ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ Բագրատ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ, ՀՀ գլխավոր դատախազության միջազգային իրավական կապերի բաժնի ավագ դատախազ Եղիազար ԱՎԱԳՅԱՆԸ, ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Գևորգ ԹՈՎՄԱՍՅԱՆԸ:



ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի կողմից՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, զինվորական դատախազ Արտավազ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ, ՀՀ գլխավոր դատախազության վերահսկողական-տեսչական վարչության պետ Միհրան ՄԻՆԱՍՅԱՆԸ, ՀՀ գլխավոր դատախազի գլխավոր խորհրդական Գուրգեն ԱՄԲԱՐՅԱՆԸ:



**Դատախազության աշխատողի օրվա կապակցությամբ  
Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ  
Գուրգ ԿՈՍՏԱՆՅԱՆԸ պարգևատրվել է.**



ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն Գորիկ ԶԱԿՈՔՅԱՆԻ հրամանով՝ արժեքավոր նվերով,

ՀՀ ոստիկանության պետ Վլադիմիր ԳԱՍՊԱՐՅԱՆԻ հրամանով՝ «Համագործակցության անրապնդման համար» մեդալով,

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Արմեն ԵՐԻՑՅԱՆԻ հրամանով՝ «ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պատվավոր աշխատակից» մեդալով և թանկարժեք նվերով:

ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ Վ. ՇԱՀԻՆՅԱՆԻ հրամանով՝ «ՀՀ իրավակարգի անրապնդման համար» մեդալով:

**Ծառայողական պարտականությունները պատշաճ կատարելու համար և Դատախազության աշխատողի օրվա կապակցությամբ ՀՀ դատախազության մի խումբ աշխատակիցներ ՀՀ գլխավոր դատախազ ԳԵՎՈՐԳ ԿՈՍՏԱՆՅԱՆԻ հրամաններով խրախուսվել են.**

հուշանվերներով պարգևատրվել են՝

ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ Արտակ ՋԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ,


ՀՀ գլխավոր դատախազության իրավական ապահովման և եվրաինտեգրման բաժնի պետ Թամարա ՇԱՔԱՐՅԱՆԸ,

Կոտայքի մարզի դատախազ Վազգեն ՌՇՏՈՒՆԻՆ:

Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազ Հարություն ՍԱՐԳՍՅԱՆԸ,

ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆԸ,

ՀՀ գլխավոր դատախազի ավագ օգնական Կամո ԱՎԱԳՈՒՄՅԱՆԸ:



## Արտահերթ դասային աստիճան է շնորհվել.

Շիրակի մարզի դատախազ Րաֆֆի ԱՍԼԱՆՅԱՆԻՆ և Երևան քաղաքի դատախազության ավագ դատախազ Արսեն ԿՈՍԱՆԴՅԱՆԻՆ շնորհվել են արդարադատության երկրորդ դասի խորհրդականի դասային աստիճաններ.

ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության պետ Վահե ՌԱՖԱՅԵԼՅԱՆԻՆ՝ առաջին դասի խորհրդականի դասային աստիճան:

Աշխատանքային պարտականությունները բարեխղճորեն կատարելու համար մի խումբ դատախազների և դատախազության աշխատակազմի պետական ծառայողների ՀՀ գլխավոր դատախազի հրամանով հայտարարվել է շնորհակալություն:

**«Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսի խմբագրական խորհուրդը սրտանց շնորհավորում է բոլոր պարգևատրվածներին և մաղթում նորանոր աշխատանքային հաջողություններ:**

## Գևորգ Կոստանյանը մասնակցել է սահմանադրական բարեփոխումների հանրային քննարկմանը



ՀՀ գլխավոր դատախազ, ՀՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամ Գևորգ Կոստանյանը Կոտայքի մարզում մասնակցել է Սահմանադրական բարեփոխումների հանրային քննարկմանը: Գ. Կոստանյանը կարևորելով սահմանադրական բարեփոխումների անհրաժեշտությունը, ընդգծել է, որ «Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագծում» հնարավորինս մանրակրկիտ և ամբողջական ներկայացվել են սահմանադրական ինստիտուտի կիրառման ընթացքում առկա այն թերությունները, բացթողումները, ինստիտուցիոնալ խնդիրները, որոնց լուծումը, հնարավոր չէ կարգավորել օրենսդրական, ենթօրենսդրական ակտերի փոփոխության կամ իրավակիրառ պրակտիկայի փոփոխության եղանակով, այլ անհրաժեշտ են բացառապես սահմանադրաիրավական բարեփոխումներ: Փաստաթղթում ներկայացված են նաև լուծման եղանակներ, որոնք կարող են հանգեցնել երկրում սահմանադրական կարգերի ամրապնդմանն ու կատարելագործմանը:

Գլխավոր դատախազի խոսքով, առաջնահերթ ուշադրություն է դարձվել Սահմանադրության մարդու իրավունքների և ազատությունների գլխին.

«Շատ դեպքերում մենք ունենում ենք սահմանադրական իրավունք, բայց քաղաքացու ունեցած սահմանադրական իրավունքին համարժեք պարտականություն և պատասխանատվություն պետական մարմնի համար կամ իրավակիրառ մարմնի համար սահմանված չէ: Կամ եթե սահմանված է, ապա այնպիսի լայն մեկնաբանությունների հնարավորություն է տալիս, որ մենք գործնականում ունենում ենք աղավաղված մոտեցումներ», - նշել է Գևորգ Կոստանյանը:

ՀՀ գլխավոր դատախազի հանդամար, «Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագիծը» հնարավորություն կտա ունենալ պետական կառավարման այնպիսի համակարգ, որտեղ անձերի փոփոխությունը չի հանգեցնի համակարգի փոփոխության և կոնկրետ ոլորտում անկումը կամ արդյունավետության բարձրացումը կախված չի լինի անձի փոփոխությունից: Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի ուշադրության կենտրոնում է եղել նաև դատական իշխանությունը: ՀՀ գլխավոր դատախազը պատասխանել է նաև քննարկման մասնակիցների հարցերին:

## ՀՀ գլխավոր դատախազը պարգևատրել է Արամ Թամազյանին



ՀՀ գլխավոր դատախազությունում տեղի է ունեցել **Գլխավոր դատախազի նախկին տեղակալ Ա. Թամազյանի** պարգևատրման պաշտոնական արարողությունը:

Գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանը՝ Հայաստանի Հանրապետության դատախազության համակարգում երկարամյա, անբասիր ծառայության համար և Անկախության տոնի առթիվ, ՀՀ գլխավոր դատախազի նախկին տեղակալ Արամ Արծվիի Թամազյանին պարգևատրել է հուշանվե-

րով և շնորհակալություն հայտնել համատեղ արդյունավետ աշխատանքի համար:

Գևորգ Կոստանյանն՝ ընդգծելով նախկին տեղակալի ոչ միայն պրոֆեսիոնալ, այլ նաև մարդկային բարձր որակները, նրա ունեցած զգալի ավանդը ՀՀ իրավապահ համակարգի և մասնավորապես՝ դատախազության կայացման գործում, վստահություն է հայտնել, որ կարճ ժամանակահատվածում նրա աշխատանքի արդյունքը տեսանելի կլինի նաև նոր աշխատավայրում:



ՀՀ նախագահի հրմանագրով՝ Արամ Թամազյանը ազատվել է ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի պաշտոնից և նշանակվել է ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ:



Ծառայողական պարտականությունները պատշաճ կատարելու և երկարամյա ծառայության համար Հատուկ քննչական ծառայության պետ՝ Վահրամ ՇԱՀԻՆՅԱՆԻ կողմց պար-

գևատրվել է նաև ՀՀ գլխավոր դատախազի գլխավոր խորհրդական, «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսի գլխավոր խմբագիր Գուրգեն ԱՄԲԱՐՅԱՆԸ:

## **«Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսի խմբագրական խորհրդի շնորհակալական խոսքը**



### **Հարգելի պարոն Ամբարյան**

ՀՀ դատախազության համակարգի և «Օրինականություն» հանդեսի խմբագրական խորհրդի անունից մեր երախտագիտության խոսքն ենք ուղղում Ձեզ՝ որպես հանդեսի գործունեության առաջին իսկ տարուց նրա ակունքների մոտ կանգնած անձի: Որպես հանդեսի նախկին գլխավոր խմբագիր՝ Ձեր մասնագիտական ողջ կարողությունները ներ եք դրել, որպեսզի հանդեսն իր կոչմանը վայել ներկայանա հանրությանը:

Ձեր անխոնջ ու նվիրված գործունեությունը, դատախազության համա-

կարգում Ձեր զգալի ավանդը նպաստել է ոչ միայն դատախազական գործունեության լուսաբանմանը, այլև գիտության զարգացմանը և երիտասարդ գիտնականների կայացմանը:

Ձեզ, թանկագին Գուրգեն ԱՄԲԱՐՅԱՆ ամուր առողջություն և նորանոր հաջողություններ Ձեր հետագա գործունեության մեջ:

Բարին ընդ Ձեզ...

Սիրով՝ «Օրինականություն» գիտագործնական հանդեսի խմբագրական խորհուրդ

**ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍՏՐԱՍԲՈՒՐԳՈՒՄ**

ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանը Ստրասբուրգում հանդիպում է ունեցել Եվրոպայի խորհրդի նարդու իրավունքների հանձնակատար Նիլս Սուլիժնիկսի և Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Թորբյորն Յագլանդի հետ:

Հանդիպման ընթացքում գլխավոր դատախազը Եվրոպացի պաշտոնյաների հետ քննարկել է սահմանադրական բարեփոխումների, նարդու իրավունքների պաշտպանությանը և դատաիրավական բարեփոխումներին վերաբերող հարցեր:

**ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ՀՐԱՄԱՆՆԵՐՈՎ՝**



Արդարադատության առաջին դասի խորհրդական Արտակ Արտաշեսի Կրկյաշարյանը նշանակվել է ՀՀ զինվորական դատախազի տեղակալ, ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության քրեական հետապնդման ոլորտում կայազորների զինվորական դատախազությունների գործունեությունը վերահսկող բաժնի պետ՝ ազատվելով Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազի տեղակալի պաշտոնից:

դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնի պետի պաշտոնից:

Արդարադատության երրորդ դասի խորհրդական Ալեքսան Պետրոսի Ղազարյանը նշանակվել է Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնի պետ՝ ազատվելով նույն բաժնի ավագ դատախազի պաշտոնից:

Կարեն Ասպետի Բրուտյանը նշանակվել է ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական:

Արդարադատության առաջին դասի խորհրդական Ներսես Ասլանի Միսակյանը նշանակվել է Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազի տեղակալ՝ ազատվելով ՀՀ զինվորական կենտրոնական

Գուրգեն Ցոլակի Ամբարյանը ազատվել է ՀՀ գլխավոր դատախազի գլխավոր խորհրդականի պաշտոնից:

## ԴԻԱԿԸ (ԴԻԱԿԻ ՄԱՍԵՐԸ) ՈՐՊԵՍ ԻՐԵՂԵՆ ԱՊՑՈՒՅՑ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԻՐԱՎԱՉԱՓՈՒԹՅՈՒՆԸ

### Արթուր ՂԱՄԲԱՐՅԱՆ

Քննչական կոմիտեի նախագահի տեղակալ

«Քրեական արդարադատություն» գիտավերլուծական խորհրդի նախագահ,

իրավաբանական գիտությունների դոկտոր

Քրեական դատավարությունում իրեղեն ապացույցները հանդիսանում են ապացույցի ինքնուրույն տեսակ (միջոց), որոնց հավաքման, ամրագրման, պահպանման և տնօրինման հետ կապված հարցերը կարգավորվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծում (այսուհետ՝ Նախագիծ):

Քրեական դատավարության գիտության մեջ և իրավակիրառ պրակտիկայում այս կամ այն առարկան իրեղեն ապացույց ճանաչելու հարցի կապակցությամբ հաճախ են ծագում վեճեր, օրինակ, արդյո՞ք, կենդանիները, միկրոմարմինները կարող են ճանաչվել իրեղեն ապացույց: Նույնիսկ առանձին հեղինակներ նշված հարցի վերաբերյալ հայտնում են հակասական մոտեցումներ: Այսպես, Ե. Արտամոնովան իր հեղինակած մենագրության մեջ նշում է, որ գողացված կենդանիները համարվում են իրեղեն ապացույց, քանի որ հանցավոր ոտնձգությունն ուղղված է նրանց դեմ, իսկ մի քանի պարբերություն հետո, նշում է, որ կենդանիները չեն կարող համարվել իրեղեն ապացույց, քանի որ նրանք ոչ թե առարկաներ են, այլ կենդանի<sup>1</sup>:

Սույն հոդվածում կանդադարադառնա՞նք դիակը որպես իրեղեն ապացույց ճանաչելու հարցին: Այդ նպատակով նախ կքննարկվեն սույն հարցի վերաբերյալ քրեական դատավարության գիտության մեջ առկա մոտեցումները, այնուհետև՝ խնդիրը կդիտարկվի ապացույցների թույլատրելիության տեսության և գործող քրեական դատավարության օրենսգրքի (Նախագիծ) իրավակարգավորումների համատեքստում:

Դիակը որպես իրեղեն ապացույց ճանաչելու վերաբերյալ վեճը քրեական դատավարության գիտության մեջ: Դատավարագետները միասնական մոտեցում չունեն դիակը կամ դրա մասերը որպես իրեղեն ապացույց ճանաչելու հարցի վերաբերյալ: Այսպես, դատավարագետների մեծ մասը գտնում է, որ անթույլատրելի է դիակը ճանաչել որպես իրեղեն ապացույց: Յու. Օրլովը նշում է, որ իրեղեն ապացույցներից բացի, գոյություն ունեն նյութական օբյեկտներ, որոնք իմացաբանական տեսանկյունից ապացույցման գործընթացում ունեն նույն դերը, ինչ որ իրեղեն ապացույցները, սակայն դատավարական իմաստով քրեական գործին չեն

<sup>1</sup> Артамонова Е. И. Основы теории доказательств в современном уголовном судопроизводстве. Учебное пособие для высших и средних юридических образовательных учреждений. М., Юрлитинформ, 2010, С. 138, 139.

կցվում՝ ելնելով բարոյաէթիկական նկատառումներից (օրինակ՝ դիակը)<sup>2</sup>: Ա. Բարիգինան նշում է, որ թեև մարդու դիակը համարվում է հանցավոր ոտնձգության օբյեկտ, սակայն այն, էթիկական նորմերի և քրեադատավարական օրենսդրության տեսանկյունից, չի կարող հանդիսանալ իրեղեն ապացույց: Եթե դիակը ճանաչվի իրեղեն ապացույց, ապա այն, ընդհանուր կանոնի համաձայն, պետք է նաև հետազոտվի դատական լսումների ընթացքում<sup>3</sup>: Այս կապակցությամբ Բ. Բեզլեպկինը նշում է, որ դատական նիստի ժամանակ հնարավոր չէ հետազոտել մարդու մարմնի մասերը: Սպանված մարդու դիակի արտաշիրիմման միջոցով ձեռք բերված զանգն առարկա չէ և բարոյականության ու կրոնական տեսանկյունից անթույլատրելի է այն հետազոտել դատական նիստի ժամանակ<sup>4</sup>: Մի շարք այլ հեղինակներ նույնպես, ելնելով զուտ բարոյականության նկատառումներից, նշում են՝ դիակը որպես իրեղեն ապացույց ճանաչելու անթույլատրելիության մասին<sup>5</sup>:

Ա. Էյսմանը նշում է, որ դիակը չի համարվում իրեղեն ապացույց ոչ թե այն

պատճառով, որ դա կհակասի բարոյական հայացքներին, այլ, որ այն չի կարող կցվել քրեական գործին<sup>6</sup>:

Ինչպես նկատում ենք, նշված հեղինակները մի կողմից՝ ընդունում են դիակի արտաքին հատկանիշների ապացուցողական նշանակությունը, մյուս կողմից՝ հերքում են այն իրեղեն ապացույց ճանաչելը՝ հիմք ընդունելով բացառապես բարոյական (կրոնական) նորմերը և այն քրեական գործին կցելու անհնարինությունը: Կարծում ենք, դիակը որպես իրեղեն ապացույց ճանաչելու դեմ բերվող երկու հիմնական փաստարկները խիստ վիճելի են: Վ. Լազերևան արդարացիորեն նշում է, որ օրենսդրությամբ պարտադիր չէ իրեղեն ապացույցները պահել քրեական գործում<sup>7</sup>: Գր. դատ. օր-ի Նախագծի 98-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե իրեղեն ապացույցը մեծածավալության, մեծաքանակության կամ այլ պատճառներով չի կարող պահվել վարույթի նյութերի հետ կամ դրա պահպանման ծախսերը ողջամտորեն արդարացված չեն, ապա այդ ապացույցը վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ 1) վերադարձվում է օրինական տիրապետողին, եթե դա չի կարող վնասել պատշաճ ապացուցմանը.

<sup>2</sup> Орлов Ю. К. Основы теории доказательств в уголовном процессе. Науч.прак. пособие. М., 2000, С. 114.

<sup>3</sup> Барыгина А. А. Особенности оценки отдельных видов доказательств в уголовном судопроизводстве. Монография. М., Юрлитинформ. 2013, С. 212.

<sup>4</sup> Безлепкин Б.Т. Настольная книга следователя и дознавателя. М., Проспект, 2011, С. 131-132.

<sup>5</sup> Победкин А. В. Уголовно-процессуальное доказывание. М., Юрлитинформ, 2009. С. 339, Артамонова Е.И. Основы теории доказательств в современном уголовном судопроизводстве. Учебное пособие для высших и средних юридических образовательных учреждений. М., Юрлитинформ, 2010, С. 139,

<sup>6</sup> Эйсман А. А. Заключение эксперта. (Структураи научное обоснование). Изд. Юридическая литература, М., 1967, С. 134.

<sup>7</sup> Лазарева В. А. Доказывание в уголовном процессе. Учебно-практическое пособие. 2-е изд., перераб. и доп. М., Изд. Юрайт, 2011, С. 314.

2) լուսանկարահանվում կամ տեսանկարահանվում է, հնարավորության դեպքում նաև կնքվում է, և պահվում որոշմամբ սահմանված վայրում, իսկ վարույթի նյութերին կցվում է այդ իրեղեն ապացույցի գտնվելու վայրի մասին փաստաթուղթ:

Ինչ վերաբերում է բարոյական նորմերի տեսանկյունից դիակը որպես իրեղեն ապացույց ճանաչելու անթույլատրելիությանը, ապա նշենք, որ տվյալ պարագայում առավել գերակայում է ոչ թե բարոյական նորմերի խիստ վերացական պահանջները, այլ դիակի հայտնաբերման ուղղությամբ կատարվող ապացուցողական գործողությունների օրինականության ապահովման և դրա նկատմամբ ապացույցների թույլատրելիության սահմանադրական պահանջի կիրառությունը (այս մասին ստորև):

Վերը նշված տեսական աղբյուրների վերլուծությունից չպետք է եզրակացնել, որ դատավարագիտության մեջ միանշանակ է դիակի որպես իրեղեն ապացույց ճանաչելու անթույլատրելիության մասին մոտեցումը: Մի շարք դատավարագետներ գտնում են, որ դիակը պետք է ճանաչել որպես ապացույց<sup>8</sup>: Նման մոտեցումը հատկապես տարածված էր մինչ խորհրդային մասնագիտական գրականության մեջ: Այսպես, Ի. Բենտամը «Դատա-

կան ապացույցների մասին» աշխատության մեջ թվարկում է իրեղեն ապացույցները և դրանց շարքում նշում նաև մարդը, որի նկատմամբ իրականացվում է ոտնձգությունը, մարդու մարմնի վրա առկա բռնության հետքերը<sup>9</sup>: Վ. Սերգեևը, խոսելով իրեղեն ապացույցների արտաքին հատկանիշների մասին, նշում է, որ եթե մարդը մեղադրվում է գողության մեջ, ապա այդպիսի արտաքին հատկանիշ է համարվում նրա բնակարանում հայտնաբերված գողոնը, իսկ եթե մեղադրվում է սպանություն կատարելու մեջ, ապա՝ դիակը<sup>10</sup>: Դիակը որպես իրեղեն ապացույց ճանաչելու մասին է նշում նաև Ի. Ֆոյնիցկին<sup>11</sup>:

Ժամանակակից կրիմինալիստիկական գրականության մեջ նույնպես նշվում է, որ իրեղեն տեղեկատվության հատուկ աղբյուր են համարվում դիակը և դրա մասերը: Այն դեպքերում, երբ դիակի առարկայական հատկանիշները հետախուզական, դիագնոստիկ կամ նույնականացման խնդիրների լուծման համար ունեն նշանակություն, ապա նրանց վրա տարածվում են իրեղեն տեղեկատվության աղբյուրների կարգավիճակը և դրանց զննության, ամրագրման և հետազոտման կանոնները<sup>12</sup>:

<sup>8</sup> Кертес И. Основы теории вещественных доказательств. М., 1973, С. 21, 25.

<sup>9</sup> Մեջբերումն ըստ՝ Барыгина А.А. Особенности оценки отдельных видов доказательств в уголовном судопроизводстве. Монография. М., Юрлитинформ. 2013, С. 200.

<sup>10</sup> Մեջբերումն ըստ՝ Худякова Ю. В. Вещественные доказательства в уголовном процессе. Дис. ... канд. юрид. Наук. Челябинск, 2006, С. 35.

<sup>11</sup> Фойницкий И.Я. Курс уголовного судопроизводства. Т. 2. Под ред. А.В. Смирнова СПб.: Альфа, 1996, С. 304-305.

<sup>12</sup> Вещественные доказательства: информационные технологии процессуального доказывания. Под общ. ред. В. Я. Колдина. М., Изд. НОРМА, 2002, С. 6.



**Ապացուցողական (քննչական) գործողություններով ապացույց ձեռք բերելու նպատակաուղղվածությունը:**

Քրեական վարույթի ընթացքում դիակը որպես ապացույց ճանաչելու մասին է վկայում այն պարզ հանգամանքը, որ դիակը քրեական վարույթ է ընդգրկվում բացառապես ապացուցողական գործողությունների կատարմամբ: Ավելին, օրենսդիրը դիակի հայտնաբերման ուղղությամբ իրականացվող մի շարք ապացուցողական գործողությունների իրականացման համար նախատեսել է հատուկ դատավարական կարգավորումներ: Այլ կերպ ասած, քրեական վարույթի շրջանակներում դիակը հայտնաբերվում կամ նրա գտնվելու վայրը պարզվում է ապացուցողական գործողություններով:

Քննարկվող հարցի կտրվածքով պետք է պարզել այն հանգամանքը, թե ապացուցողական գործողությունների կատարմամբ ինչ է ակնկալվում ձեռք բերել: ՀՀ քր. դատ. օր-ի Նախագծի 6-րդ հոդվածի 38-րդ կետում ապացուցողական գործողությունը բնորոշվում է՝ քննիչի կամ դատարանի կողմից, ինչպես նաև հետաքննության մարմնի (քննիչի հանձնարարությամբ) կամ փորձագետի (քննիչի կամ դատարանի հանձնարարությամբ) կողմից կատարվող՝ հիշյալ օրենսգրքով նախատեսված

վարույթային գործողություն, որի արդյունքում ակնկալվում է ձեռք բերել ապացույց: Օրենսդրական մնամ բնորոշումից հստակ երևում է, որ ապացուցողական գործողությունների արդյունքում ակնկալվում է ձեռք բերել ապացույց: Այս իմաստով, եթե դիակի հայտնաբերման նպատակով օրենքը նախատեսում է կատարել ոչ թե օպերատիվ-հետախուզական, այլ ապացուցողական գործողություն, օրինակ՝ խուզարկություն, ապա այս դեպքում պետք է ընդունել, որ դիակի խուզարկության կատարմամբ ակնկալվում է ձեռք բերել ապացույց, ինչպիսին կարող է հանդիսանալ դիակը: Դիակի հայտնաբերման ուղղությամբ կատարված ապացուցողական գործողությունների արդյունքում դիակը որպես ապացույց ձեռք բերելու նպատակը հերքելու դեպքում կասկածի տակ է դրվում ապացուցողական գործողությունների օրենսդրական նպատակի առկայությունը: Եթե ի սկզբանե հայտնի է, որ դիակի հայտնաբերման ուղղությամբ կատարվող գործողությունների արդյունքում ձեռք բերվածն ապացույց չի կարող համարվել, ապա պետք է քննարկել դիակը ոչ թե ապացուցողական, այլև այլ բնույթի պետական գործողությունների կատարմամբ հայտնաբերելու հնարավորությունը<sup>13</sup>:

<sup>13</sup> Օրինակ ՀՀ քր. դատ. օր-ի Նախագծի 241-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված է, որ քննությունից թաքնվող մեղադրյալին հայտնաբերելու նպատակով կատարվում է խուզարկություն: Նկատի ունենալով, որ մարդն առարկա չէ, ուստի իսկզբանե հերքվում է մարդու որպես ապացույց ճանաչելու հնարավորությունը, հետևապես պետք է օրենսդրության մեջ վերանայել քննությունից թաքնվող մեղադրյալին ապացուցողական գործողությունների, տվյալ դեպքում խուզարկության միջով հայտնաբերելու կարգավորումը: Քննությունից թաքնվող մեղադրյալին հայտնաբերելու ընթացակարգն առավելապես պետք է գտնվի օպերատիվ-հետախուզական գործունեության տիրույթում: Այսպես, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում, որպես օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակ նշված է՝ քրեական պատասխանատվությունից խուսափող անձանց հետախուզումը և հայտնաբերումը:

Այսպիսով, նկատի ունենալով, որ դիակի հայտնաբերման (կոնկրետ վայրում դիակի առկայության փաստը պարզելու) նպատակով կատարվում են ապացուցողական գործողություններ, ուստի դրանով իսկ հիմնավորվում է այդ ապացուցողական գործողությունների կատարման արդյունքում ապացույց (դիակ) ձեռք բերելու ակնկալիքը:

Դիակի կապակցությամբ իրականացվող ապացուցողական գործողությունները կարելի է բաժանել երկու խմբի՝ դիակի հայտնաբերման (կոնկրետ վայրում դիակի առկայության փաստը պարզելու) նպատակով կատարվող ապացուցողական գործողություններ և դիակի նկատմամբ իրականացվող ապացուցողական գործողություններ:

**Դիակի ձեռքբերման օրինականության նկատմամբ ապացույցների թույլատրելիության սահմանադրական ռեժիմի կիրառման անհրաժեշտությունը:**  
ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածում ամրագրված է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործման արգելքը: Ապացույցների անթույլատրելիության վերաբերյալ նորմերը հանդիսանում են ապացուցողական գործողությունների կատարման օրինականությունն ապահովող կարևորագույն երաշխիքներ: Եթե ապացուցողական գործողությունների արդյունքում ձեռք բերված տվյալների նկատմամբ չտարածվեն ապացույցների թույլատրելիության պահանջները, ապա դրանով կնվազեցվի ապացուցողական գործողությունների օրինականությունն ապահովելու դատավարական կառուցակարգերի արդյունավետությունը:

Դիակի հայտնաբերման ուղղությամբ կատարվող ապացուցողական (քննչական) գործողություններն են՝ դիակի խուզարկությունը (ՀՀ քր. դատ. օր-ի 225-րդ հոդված), դիակի արտաշիբհիմունը (ՀՀ քր. դատ. օր-ի 219 հոդված): Դիակը որպես իրեղեն ապացույց ճանաչելու հանգամանքից է կախված դիակի խուզարկության և արտաշիբհիմունի ընթացքի և դրա արդյունքների նկատմամբ ապացույցների թույլատրելիության վերաբերյալ սահմանադրական պահանջի կիրառելիությունը: Օրինակ՝ մեղադրյալի առանձնատանը, առանց դատարանի որոշման, կատարվում է խուզարկություն, և առանձնատան բակից հայտնաբերվում է սպանվածի դիակը: Եթե դիակը չճանաչվի որպես իրեղեն ապացույց, ապա այս դեպքում բնակարանի ապօրինի խուզարկության և դրա արդյունքում ձեռք բերված տվյալների նկատմամբ ապացույցների թույլատրելիության կանոնները չեն կարող կիրառվել: Նման կայուն պրակտիկայի առկայության դեպքում վարույթն իրականացնող քննիչը, ի սկզբանե գիտակցելով, որ դիակը չի ճանաչվելու որպես ապացույց, հնարավորություն է ստանում այն ձեռք բերել նույնիսկ օրենքի խախտմամբ և այն օգտագործել վարույթի ընթացքում: Չ՞է որ քննիչն այս դեպքում կաշկանդված չէ ապացույցների թույլատրելիության կանոններով: Եթե տվյալ խախտման համար քննիչը ենթարկվի կարգապահական, կամ նույնիսկ քրեական պատասխանատվության, միևնույնն է՝ նրա հանցավոր գործողությունների արդյունքում ձեռք բերված դիակը, ձևական իրավաբանական առունով չունենալով ապացույցի կարգավիճակ, քրեական դատավարությունում փաս-

տացի օգտագործվելու է մեղադրյալի մեղավորությունն հիմնավորող «ապացույց»: Անկասկած իրավական և բարոյական տեսանկյունից անընդունելի է մարդու սահմանադրական իրավունքների խախտմամբ ձեռք բերված տվյալները օգտագործել նրա մեղավորությունը հիմնավորելու համար:

Կարծում ենք, բարոյական նորմերը չեն կարող գերակայություն ունենալ, դիակի ձեռքբերման օրինականության ապահովմանն ուղղված՝ ապացույցների թույլատրելիության սահմանադրական պահանջի նկատմամբ: Եթե նույնիսկ ընդունենք, որ բարոյական տեսանկյունից անթույլատրելի է դիակը ճանաչել որպես իրեղեն ապացույց, միևնույնն է, տվյալ դեպքում, առավել արժևորվում է դիակի ձեռք բերման օրինականության ապահովման դատավարական կառուցակարգերն՝ ապացույցների թույլատրելիության կանոնների կիրառումը:

**Դիակի հիման վրա ձեռք բերված այլ ապացույցների նկատմամբ «թունավորված ծառի պտուղների թունավոր լինելու» կանոնի կիրառման անհրաժեշտությունը:** Դիակի նկատմամբ կարող են իրականացվել հետևյալ քննչական (ապացուցողական) գործողությունները՝ դիակի զննումը (ՀՀ քր. դատ. օր-ի 217 հոդված), դիակը

ճանաչման ներկայացնելը (ՀՀ քր. դատ. օր-ի 225 հոդված), դիակից նմուշներ ստանալը (ՀՀ քր. դատ. օր-ի 253 հոդված): Դիակի նկատմամբ իրականացվող ապացուցողական գործողությունները նպատակ են հետապնդում հայտնաբերելու վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքներ, ենթադրյալ հանցագործության հետքեր, այլ նյութական օբյեկտներ կամ պարզելու օբյեկտի նույնությունը: Այլ կերպ ասած, հատկապես դիակի նկատմամբ ապացուցողական գործողությունների կատարմամբ ձեռք են բերվում վարույթի համար էական նշանակություն ունեցող նոր ապացույցներ: Եթե դիակը չի ճանաչվում որպես իրեղեն ապացույց, արդյո՞ք, դիակի կապակցությամբ կատարված ապացուցողական գործողությունների արդյունքում ձեռք բերված նոր ապացույցների նկատմամբ կարող է կիրառվել «թունավորված ծառի պտուղները թունավոր են» կանոնը: Նախագծի 97-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքի էական խախտմամբ ստացված տվյալները, ինչպես նաև դրանց հիման վրա կատարված վարութային գործողությունների արդյունքում ձեռք բերված տվյալները ճանաչվում են անթույլատրելի և չեն կարող օգտագործվել որպես ապացույց<sup>14</sup>: Այսպես,

<sup>14</sup> Անօրինական գործողությունների արդյունքում ձեռք բերված փաստերից ստացված տեղեկատվությունը որևէ եղանակով ընդդեմ մեղադրյալի օգտագործման արգելքը ( թունավոր ծառի պտուղների սկզբունքը) խորապես արմատավորված է Ամերիկայի Միացյալ Նահանգների իրավական ավանդույթում: Այս կանոնը կիրառվում է նաև այլ երկրների օրենսդրությունում: Օրինակ՝ Հարավային Աֆրիկայի Հանրապետության Գերագույն դարարանը 2008թ. ապրիլի 10-ի «*Mthembu* ընդդեմ պետության», գործով կայացրած վճռում արձանագրել է, որ մեղսակցից խոշտանգմամբ կորզված ցուցմունքներն, այդ թվում՝ դրանց միջոցով ձեռք բերված իրեղեն ապացույցն, անընդունելի է: *Hilux* ավտոմեքենան և մետաղյա արկղը իրեղեն ապացույցներ էին, որոնք որոշիչ դեր էին խաղում պետության կողմից դիմումատուի դեմ կողոպուտի մեղադրանքով հարուցած գործում: Սովորաբար նման ապացույցը չի բացառվում, քանի որ այն առկա է անկախ որևէ սահմանադրական խախտումից: Սակայն այդ փաստերն ի հայտ են եկել ոստիկանության կողմից *Ramseroop*-ին խոշտանգելու արդյունքում: Չկա որևէ ապացույց, որ այդ փաստերը ցանկացած դեպքում կբացահայտվեին: Հակառակ դեպքում այս գործն ուրիշ արդյունք կարող էր ունենալ: Խոշտանգումն անշտկելիորեն արժեզրկել է ապացույցը...:

խոշտանգման արդյունքում մեղադրյալը ցուցմունքներում նշում է դիակի գտնվելու վայրը: Խոշտանգման արդյունքում ձեռք բերված տվյալների հիման վրա վարույթն իրականացնող մարմինը կատարում է դեպքի վայրի զննություն և հայտնաբերում դիակը: Այնուհետև, դիակի վրայից վերցված նմուշների հիման վրա նշանակվում են փորձաքննություններ, որոնց եզրակացությամբ հաստատվում է խոշտանգման ենթարկված անձի մեղավորությունը: Արդյո՞ք, դեպքի վայրի զննության, փորձաքննության եզրակացության նկատմամբ կիրառելի է «թունավորված ծառի պտուղների անթույլատրելիության տեսությունը»: Եթե հետևում ենք այն մոտեցմանը, որ դիակն իրեղեն ապացույց չէ, ապա նշված օրինակում փորձաքննությունների եզրակացությունները պետք է ճանաչել որպես թույլատրելի ապացույց, քանի որ փորձաքննությունները կատարվել են ոչ թե ապօրինի ձեռք բերված ապացույցի, այլ ապացույց չհանդիսացող դիակի (իրեղեն տվյալների) հիման վրա, որն ինքնին չի կարող անթույլատրելի ճանաչվել: Եթե դիակը չի կարող անթույլատրելի ճանաչվել, ապա որևէ հիմք չկա վիճարկել նաև փորձագետի եզրակացությունները: Կարծում ենք, այս իրավիճակում անձը զրկվում է պաշտպանության արդյունավետ միջոցի սահմանադրական իրավունքից:

Միևնույն ժամանակ, Գաֆգենն ընդդեմ Գերմանիայի գործով (1 հունիսի 2010 թվական) Եվրոպական դատարանը սույն հարցի վերաբերյալ արտահայտել է որոշակի իմաստով տարբերվող մոտեցում: Դիմումատուն դատապարտվել է անչափահաս J.-ին

առևանգելու և սպանելու համար: Ձերբակալվելուց հետո, դիմումատուն ոստիկանությանը մոլորության մեջ գցելու նպատակով ասել էր, որ երեխան պահվում է այլ առևանգողի կողմից: Հարցաքննության ժամանակ օպերլիազորը սպառնացել էր դիմումատունին, որ եթե վերջինս չհայտնի երեխայի գտնվելու վայրը, նրան կհանձնեն այդ նպատակով հատուկ պատրաստված մի անձի, որն իրեն զգալի մարմնական ցավ կպատճառի: Ոստիկանության ծառայողը նաև սպառնացել էր, որ դիմումատունին կփակեն խցում երկու խոշոր սևամորթ տղամարդկանց հետ, որոնք սեռական բռնություն կգործադրեն իր նկատմամբ: Ոստիկանության ծառայողը նաև մի քանի անգամ ձեռքով հարվածել էր իր կրծքին և թափահարել նրան, որի պատճառով դիմումատուն մեկ անգամ գլխով հարվածել էր պատին: Դիմումատուն, վախենալով, որ ոստիկանության ծառայողները կիրականացնեն սպառնալիքները, հայտնել էր, թե որտեղ էր թաքցրել երեխայի մարմինը: Դիմումատուն բողոքարկել է նաև 3-րդ հողվածի խախտմամբ իրենից կորզված խոստովանության միջոցով ձեռք բերված իրեղեն ապացույցների, այդ թվում՝ երեխայի մարմնի հայտնաբերման և դրան հետևած դիակի թմաման զեկույցի, լճակի մոտ դիմումատուի ավտոմեքենայի հետքերի ընդունման և օգտագործման հանգամանքը:

Եվրոպական դատարանը սույն գործով նախ նշել է, որ իրեղեն ապացույցը, որը ձեռք է բերվել բռնության գործադրման արդյունքում, առնվազն այն դեպքերում, երբ այդ բռնությունը

կարելի որակել որպես խոշտանգում, երբեք չի կարող մեղադրյալին մեղքի ապացույց հանդիսանալ, անկախ նրա իրական արժեքից: Ցանկացած այլ կարծիք ծառայելու է հոգուտ բարոյապես անթույլատրելի վարքագծի անուղղակի օրինականացմանը, որը 3-րդ հոդվածի հեղինակները ձգտել են արգելել կամ բառացիորեն՝ «օրենքի պատնեշ կանգնեցնել բռնության առջև»: Կոնվենցիայի 3-րդ հոդվածին հակասող մեթոդներով կորզված խոստովանության շնորհիվ ձեռք բերված իրեղեն ապացույցների օգտագործումը նույնքան մեծ կասկածի տակ է դնում դատավարության ընդհանուր անաչառության կանխավարկածը, որքան կորզված խոստովանության օգտագործումը: Մինչև նույն ժամանակ, քննարկվող գործով Դատարանը 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի խախտում չի արձանագրել և նշել է, որ ելնելով քննչական մարմինների կողմից հարցաքննության ժամանակ կիրառված անթույլատրելի մեթոդների շարունակական ազդեցության հանգամանքից՝ Գերմանիայի Շրջանային դատարանը բացառել է հետաքննության ժամանակ դիմումատուի կողմից ներկայացված բոլոր ապացույցների օգտագործումը դատարանում: Ներպետական դատարաններն օգտագործել են դիմումատուից կորզված ցուցմունքների անուղղակի արդյունքում ձեռք բերված որոշ իրեղեն ապացույցները: Սույն գործի առանձնհատուկ հանգամանքներ կարելի է համարել, որ մեղադրական

վճռի հիմքում ընկած է եղել դիմումատուի կողմից դատավարության ժամանակ արված նոր խոստովանությունը: Այլ իրեղեն ապացույցները, այդ թվում՝ վիճարկվող գլխավոր ապացույցը, սոսկ օժանդակ բնույթ են կրել և հաշվի են առնվել սոսկ խոստովանության ճշմարտությունն ապացուցելու համար:

Եվրոպական դատարանի նշված որոշումը միանշանակ չի ընկալվել ինչպես իրավաբանական հանրության, այնպես էլ եվրոպական դատարանի առանձին անդամների կողմից<sup>15</sup>: Բացի այդ, Եվրոպական դատարանը որոշման 175-րդ կետում նշել է, որ կասկած չի հարուցում, որ հանցագործության զոհերը և նրանց ընտանիքները, ինչպես նաև հանրությունը, շահագրգռված են հանցագործներին դատելու և պատժելու մեջ, ընդ որում՝ սույն գործում այդ շահը չափազանց մեծ դեր էր խաղում: Ավելին, ներկա գործն առանձնահատուկ է նաև այն տեսակետից, որ վիճարկվող իրեղեն ապացույցը ձեռք էր բերվել անօրինական հարցաքննության արդյունքում, որի բուն նպատակը ոչ թե քրեական հետաքննության առաջխաղացման ապահովումն էր, այլ կանխարգելիչ նպատակը, այսինքն՝ երեխայի կյանքը փրկելը, ուստի Կոնվենցիայի 2-րդ հոդվածով երաշխավորված մեկ այլ հիմնարար իրավունքի պաշտպանությունը:

**Քրեադատավարական օրենսդրությամբ դիակը որպես իրեղեն ապացույց**

<sup>15</sup> Եվրոպական դատարանի դատավոր Կալաջիկը իր տարբերվող կարծիքում նշել է, որ այս որոշումը, ի հակառակ արդար դատաքննության, ճանապարհ է բացում մեղադրյալի նկատմամբ հարկադրանք կիրառելու և դրա արդյունքներն օգտագործելու համար: Аветисян Г. Дело Гефрена: открытый путь к переосмыслению нарушений ст. 3?. European Human Rights Advocacy Centre. 3(3), 2008, p.9.



**Ճանաչելու հնարավորությունը:** ՀՀ քր. դատ. օր-ի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրեղեն ապացույցներ են այն առարկաները, որոնք հանցագործության գործիք են ծառայել կամ իրենց վրա հանցագործության հետքեր են պահպանել, կամ հանցավոր գործողությունների օբյեկտներ են եղել, ինչպես նաև հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամը, այլ արժեքները և մյուս բոլոր առարկաները, որոնք կարող են հանցագործությունը հայտնաբերելու, գործի փաստական հանգամանքները պարզելու, մեղավորներին ի հայտ բերելու, մեղադրանքը հերքելու կամ պատասխանատվությունը մեղմացնելու միջոցներ ծառայել: Նախագծի 94-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրեղեն ապացույց է ճանաչվում ցանկացած առարկա, որը կարող է վարույթի համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքները պարզելու միջոց լինել, այդ թվում՝ 1) ենթադրյալ հանցագործության գործիքները կամ այն առարկաները, որոնք իրենց վրա ենթադրյալ հանցագործության հետքեր են պահպանել. 2) այն առարկաները, որոնք ենթադրյալ հանցավոր գործողության օբյեկտ են եղել. 3) ենթադրյալ հանցագործությամբ անմիջականորեն ձեռք բերված դրամը, այլ արժեքները և առարկաները: Ինչպես նկատում ենք, և՛ գործող օրենսգրքով, և՛ Նախագծով, որպես իրեղեն ապացույց են ճանաչվում առարկաները: Նախ պետք է պարզել, թե, արդյո՞ք, դիակն առարկա է, թե ոչ: Լեզվաբանական առումով «առարկա» բառը բացատրվում

է, որպես զգայաբար ընկալվող ամեն մի նյութական բան, որը դիտվում է, որպես ինքնուրույն գոյություն ունեցող իր<sup>16</sup>, զգայարաններով ընկալվող ամեն մի նյութական երևույթ, իր<sup>17</sup>: Նույն բառարանում «իր» բառը բացատրվում է որպես ամեն զգայական առարկա, բնության մեջ գոյություն ունեցող նյութական մարմնական որևէ բան<sup>18</sup>: Լեզվաբանական իմաստով «առարկա» եզրույթի նման լայն մեկնաբանման պայմաններում, անկասկած, դիակը, որպես զգայաբար ընկալվող նյութական իր, հանդիսանում է առարկա: Քրեադատավարական տեսանկյունից դիակը համարվում է ենթադրյալ հանցավոր ներգործության օբյեկտ:

*Այսպիսով, դիակը որպես իրեղեն ապացույց ճանաչելու անթույլատրելիության մասին մոտեցումը պարզապես բարոյակրոնական բնույթի կադապարված մտածողության արդյունք է: Բարոյական նորմերը չեն կարող արգելափակել դիակի ձեռքբերման կամ դիակի հիման վրա ձեռք բերված այլ տվյալների նկատմամբ ապացույցների թույլատրելիության կանոնների կիրառությունը: Այս հարցի վերաբերյալ կադապարված իրավական մտածողությունը և իրավակիրառ պրակտիկան փոխելու նպատակով առաջարկում ենք, Նախագծում կամ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային նորմերով հատուկ կարգավորել դիակը որպես իրեղեն ապացույց ճանաչելու, այն տնօրինելու առանձնահատկությունները:*

<sup>16</sup> Աղայան է. Բ. Արդի Հայերենի Բացատրական Բառարան: «Հայաստան» Հրատարակչություն, Երեւան, 1976, էջ 121:

<sup>17</sup> Ժամանակակից Հայոց Լեզվի Բացատրական Բառարան: Հրայր Աճառյանի Անվան Լեզվի Ինստիտուտ: Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Հրատարակչություն, Երեւան, 1969, էջ 191:

<sup>18</sup> Ժամանակակից Հայոց Լեզվի Բացատրական Բառարան: էջ 977:

# ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՏԻԺ ԸՍՏ ՄՈՒՄՈՒՄԱՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ (ՇԱՐԻԱԹԻ)

Սոհիեդդին ՄՈՂԱՍՍԱԴԻ (ասպիրանտ)

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ

Մահմեդական հասարակության մեջ դեղիկտային հարաբերությունների հաստատումն ու ձևակերպումը առավելագույն չափով արտացոլվել է շարիաթի քրեական իրավունքում:

Ֆաքիհների կազմած բազմահատոր գրքերում (ֆիքհի մասնագետները) մարդկանց գործողությունների ցուցակները կազմված և դասավորված էին ըստ բարոյական արժեքի չափի: Մեր կարծիքով դեղիկտային հարաբերությունները կարելի է դասակարգել հետևյալ հինգ խմբերի.

1. Պարտադիր գործողություններ (ֆարդ), որոնց անտեսելը մեղք էր համարվում:

2. Արգելված գործողություններ (հարամ), որոնց կատարելը մեղք էր համարվում:

3. Առաջարկված գործողություններ (մանդուբ), որոնց կատարելը արժանավորություն է համարվում, իսկ անտեսելը՝ մեղք:

4. Անցանկալի գործողություններ (մաքրուհ), որոնցից խուսափելը արժանավորություն է, բայց դրանք կատարելը մեղք չէ:

5. Ոչ կանխամտածված գործողություններ (մուբահ), որոնց գործելը կամ չգործելը ոչ արժանիք է, ոչ մեղք:

Սկզբունքորեն, բավականին համապարփակ այս սխեման թույլ չի տալիս տարբերակում մտցնել կրոնի և բարոյականության, օրենքի և բարոյագիտության, հանցանքի և մեղքի միջև, ամեն ինչ բխում է հենց Աստծո պատգամից, թեև այստեղ տեղ կա մարդկանց համար՝ մանրամասները վիճարկելու: Քրիստոնեական աստվածաբանությանը հակառակ, որը Պլատոնից և ստոիկներից ժառանգել էր բարոյական արժեքների ինքնավարության հասկացությունը, սուննի իսլամի հիմնական ուղղությունը պնդում էր, որ Աստծո հրամաններին պետք է հետևի բիլալալի ֆ «առանց հարցնելու, թե ինչպես», թողնելով, որ Աստված ինքը «հասկանա իր իսկ առեղծվածը»: Այդ տարբերությունը արտահայտված է Պլատոնի հայտնի եվթիֆրո երկընտրանքով՝ գործողությունը ճիշտ է, որովհետև աստվածներն են այն հրամայում, թե՞ որովհետև այն ճիշտ է: Մութագիլիներն իրենց ռացիոնալիզմի տեսանկյունից, այսինքն՝ Աստված պարտավոր է բարու համար հատուցել, «այո» կպատասխանեին այս հարցերից երկրորդին: Հանբալիների և աշարիների համար, որոնց տեսակետը մինչև այժմ գերիշխում է սուննի խորհուրդներում, առաջին հարցն էր, որ հաստատական պատասխան էր պահանջում: Այն միտքը, որ Աստված պարտավոր էր բարու համար հատուցել, վարկաբեկում էր

նրա ամենակարող լինելու իմաստը<sup>1</sup>: «Աստվածաբանության (իսլամական) հիմնական ուղղվածությունը ընդունում էր բարոյագիտության աստվածային պատգամի տեսությունը, գործողությունը ճիշտ է, որովհետև Աստված է այն պատգամում: Աստված չի պատգամում, որովհետև այն ճիշտ է: Վերջին տեսակետն անընդունելի էր համարվում, որովհետև այն սահմանափակման մեջ էր դնում Աստծո գործությունը: Նա պետք է հաստատեր իր կամքը՝ անկախ բարոյական նորմերից, դրանով ժխտելով Աստծո ամենակարողության սկզբունքը: Քրիստոնեական այն տեսակետը, որը մշակել են Սբ. Թոմաս Աքվինացին և մյուսները, թե Աստված պարտավոր է բարու համար հատուցել, դարձել է բնական օրենքի ուսմունք: Սկսած Թոմաս Աքվինացու պնդումից, որ անհնար է հավատի ճշմարտության համար հակառակ գնալ բնական դատողությանը հայտնի սկզբունքներին, քրիստոնեական մտածելակերպը մշակեց բնական իրավունքների տեսություն, որը հետագայում վերաճեց մարդու իրավունքների ժամանակակից հասկացության, որպեսզի բազմաքանակ մարդիկ ամբողջ աշխարհում այլևս չղթայված չմնան քրիստոնեության խարսխին: Ըստ Ամերիկայի անկախության հռչակագրի այն բառերի, որոնք հնչում են մաս Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում և մարդու իրավունքները բազմաթիվ այլ փաստաթղթերում, կյանքի նկատմամբ անօտարելի իրավունքը, ազատությունը

և «երջանկությանը հետամուտ լինելը» պատկանում են ակնհայտ, և ոչ թե բացահայտված ճշմարտությունների շարքին: Ինչպես նշում է Ջոն Շեֆրդը՝ «Քրիստոնեական աստվածաբանությունը տրամաբանական տեղ է հատկացնում բարոյական ներըմբռնման և իրազեկության զարգացմանը՝ անկախ աստվածաբանությունից: Այդ տրամաբանական տեղում էլ առաջացավ ու ծաղկում ապրեց ազատականությունը: Վերջին տարիներին մահմեդական իրավաբաններն ու աստվածաբանները փորձել են ցույց տալ, որ չկան էական անհամատեղելիություններ իսլամի և մարդու իրավունքների ժամանակակից աշխարհիկ գաղափարների միջև: Հայտնի մասնագետ Սայիդ Աբդ ալ-Լաթիֆը, շարունակելով այս միտքն ասում է, որ Ղուրանն ուսումնասիրողին ոչ մի բառ անծանոթ չի թվա մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի նախաբանում, գլուխներում կամ հոդվածներում: Այն համոզմունքը, որով մարդը դրվում է Աստծո կողքին՝ անկախ ռասսայի, մաշկի գույնի և ծագման ցանկացած տարբերության, մարդկությանը կոչ է անում ապրել միասին, որպես Աստծո ընտանիք... Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը պետք է ընդունվի որպես հիմնական հետևանք կամ Ղուրանի ընդլայնման ծրագիր»:

Նման դիրքորոշումները բավականին տարածված են կրթված, ազատ մտածելակերպի տեր մահմեդականների մեջ, բայց դրանք ուղղված չեն բարոյական դժվարությունների հաղ-

<sup>1</sup> St. u Malise Ruthven Islam in the World second edition. Published by Oxford University

թահարմանը, որոնք բխում են Ղուրանի որոշ հրահանգների հատուկ բնույթից:

Քրեական հանցագործությունները, ինչպես նաև մյուս արգելված, պարսավելի, անընդունելի արարքները Շարիաթը բնորոշում է որպես «հուղղուղ Ալլահ»՝ «Ալլահի սահմանների» խախտում (65:1): Ղուրանում էլ նշված է, որ կա «կանոնադրություն Աստծո, որը չի կարելի խախտել» (65:1) և որի տակ ենթադրվում են սոցիալ-իրավական և ընտանեկան-կենցաղային ամենատարբեր խախտումների արգելքներ:

Շարիաթի կողմից սահմանվող պատիժները քրեական և այլ հանցագործությունների համար հանգում են չորս հիմնական տեսակների<sup>2</sup>.

1.Չատուցում համանման գործողությամբ (քիսաս), սպանության համար սպանություն, վիրավորանքի համար վիրավորանք, վերքի համար վերք (ընդ որում՝ Շարիաթը թույլատրում է հատուցման իրականացումը կատարել բուն տուժածի, նրա ազգականների կողմից կամ էլ թողնել հատուցումը Ալլահին):

2.Թափված արյան համար վարձ կամ տուգանք (դիա), որը գանձվում է ինչպես սպանության համար, այնպես էլ վերք հասցնելու կամ հաշմելու դեպքում:

3.Պատիժ, որն օրենքը սահմանում է նախադեպի հիման վրա:

4.Պատիժ, որը սահմանում է շարիաթական դատավորը իր հայեցողությամբ [190,1]:

<sup>2</sup> Տե՛ս Զերաաթ Ա. Իսլամական պատժամիջոցները ժամանակակից իրավական համակարգում: Թեհրան, 2004, էջ 243-244 (պարսկերեն):

# ՇԱՀԱՊԻՏԱԿԱՆ ՆԱՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻ ՈՐՈՇ ԿԻՍԼԱՎԱՐՑԵՐ

## Ալիսա ԱՄԻՐԻԱՆՅԱՆ

ՀՀ դատախազության աշխատակազմի պետական ծառայող,  
ՀՀ արդարադատության ակադեմիայի ունկնդիր

Շահադիտական հանցավորությունը տարածվածության բարձր մակարդակ ունեցող քրեական երևույթ է ամբողջ աշխարհում, ուստի վերջինիս կրիմինալոգիական հիմնախնդիրների ուսումնասիրության արդիականությունն ընդգծելու համար բավական է թերևս շեշտադրում կատարել այն փաստարկի վրա, որ համաշխարհային զարգացման արդի պայմաններում զարգացած երկրներում գրանցված հանցավորության կառուցվածքում շահադիտական մոտիվացիայով են կատարվում հանցագործությունների մոտ 90%-ը, իսկ զարգացող երկրներում՝ 60 %-ը<sup>1</sup>:

Հայաստանի Հանրապետությունում ևս շահադիտական հանցավորությունն անընդհատ աճի միտումներ ունի: Այսպես, ի համեմատություն 1990 թվականի՝ 2013 թ.-ին անձնական գույքի գողություններն աճել են 1,6 անգամ, խարդախությունները՝ ավելի քան 9 անգամ: Ընդ որում, ժամանակակից գիտատեխնիկական առաջընթացի և հասարակական հարաբերությունների զարգացման արդի պայմաններում շահադիտական

հանցավորությունը գնալով դրսևորվում է առավել վտանգավոր ձևերով:

Շահադիտական հանցավորության կրիմինալոգիական հիմնախնդիրների վերհանումն անարդյունավետ կլինի առանց շահադիտական հանցավորության հասկացության, դրա սահմանների ճշգրտման:

Շահադիտական հանցավորության հասկացությունը պարզաբանելու համար անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել երկու հասկացություն՝ «շահ» և «շահադիտական մոտիվացիա»: Այսպես, համաձայն արդի հայերենի բացատրական բառարանի, շահը հասկացվում է որպես՝ 1) որևէ զործունեությունից, ձեռնարկությունից և այլն ստացվող շահույթ, 2) գործին, վիճակին, կացությանը որևէ ձևով նպաստող հանգամանք, օգուտ 3) պարտք տրվող փողի կամ փոխարինաբար տրված մթերքի համար ստացվող տոկոս, 4) այն, ինչ համապատասխանում է մեկի ձգտումներին, անձնական բարեկեցությանը, պաշտոնական նկատառումներին և այլն<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Լунеев В.В. Преступность XX века. Мировой криминологический анализ. М., 1997, էջ 234:  
<sup>2</sup> Տե՛ս է. Բ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատարակչություն, Երեւան, 1976, էջ 1093:

Ռուսաց լեզվում ևս «շահ» հասկացության տակ ավանդաբար ընկալվում է շահույթը, նյութական օգուտը<sup>3</sup>:

Շահը բավականին բարդ սոցիալ-տնտեսական և իրավական հասկացություն է: Լայն ընկալմամբ շահ ստանալու ձգտումը բնորոշ է ցանկացած անձի, քանի որ առանց նյութական միջոցների ձեռքբերման, տիրապետման, տնօրինման անհնար է վարել արժանավայել կենսակերպ, հոգալ սեփական և ընտանեկան կարիքները: Դրա հետ միասին, շահի որոշ դրսևորումներ ավանդաբար դիտվել են որպես հասարակության բնականոն կենսագործունեությանը հակասող (հակահասարակական):

Տեսական գրականության մեջ<sup>4</sup> առանձնացվում են շահի մի քանի տեսակներ: Այսպես,

**1. Շահ-կուտակում**, որը կապվում է անձի այնպիսի հատկանիշների հետ, ինչպիսին են ազահությունը, ընչաքաղցությունը, կուտակման մոլուցքը: Սովորաբար շահի այս տեսակը հանգեցնում է այնպիսի հանցագործությունների կատարմանը, ինչպիսիք են կաշառակերությունը, ծառայողական դիրքի չարաշահմամբ հափշտակությունը, յուրացումը, վատնումը: Որպես կանոն, շահ-կուտակումը բնորոշ է բռնությամբ զուգորդված

հանցագործություններին: Հավանաբար դա բացատրվում է շահ-կուտակման ընդհանուր յուրահատկությամբ: Այսպես, կուտակումը ենթադրում է երկարատև գործընթաց, որը կանխորոշում է շրջապատի համար արտաքնապես գաղտնի մեթոդների կիրառում: Հենց այսպիսի մեթոդներն են ապահովում երկարատև հանցավոր գործունեության հնարավորությունը, իսկ կուտակված հարստության մանրակրկիտ քողարկումը՝ ընդհուպ մինչև դրանց օգտագործումից հրաժարվելն էականորեն դժվարացնում կամ բացառում է չվաստակած հանցավոր եկամուտների հաստատումն արտաքին տվյալների հիման վրա: Այսպիսով, շահ-կուտակումը «բացառում է սուբյեկտի իրական կարիքները: Իրերի տիրապետողի հոգևոր աշխարհը փակվում է մինչև ունայն ինքնագիտակցություն: Այս դեպքում մարդը վերածվում է նյութականի խղճուկ սեփականատիրոջ»<sup>5</sup>:

Ներկայումս նյութական բարիքների կուտակումը ծառայում է հետևյալ նպատակների իրագործմանը՝

1. արդեն ձեռք բերված բարձր կարգավիճակի պահպանում,
2. իշխանության ձեռք բերում,
3. սերունդների համար նյութական բարեկեցության ապահովում,

<sup>3</sup> Տե՛ս Ожегов С. И. Словарь русского языка. М., 1987. էջ 242:  
<sup>4</sup> Տե՛ս Миненок М. Г., Миненок Д. М. Корысть. Криминологические и уголовно-правовые проблемы, Санкт-Петербург, 2001, էջեր 83-88:  
<sup>5</sup> Տե՛ս Кейзеров Н.М. Патология потребительства.М., 1977. էջ 30:



4. բիզնեսի ընդլայնում,

5. օրենսդիր իշխանության ոլորտում լոբբիստական գործունեության իրականացում և այլն:

**2. Շահ-սպառում**, որի տարբերակող հատկությունը նմանությունն է մակաբուծությանը, երբ սուբյեկտը կենտրոնացած է նյութական հարստությունը սպառելու վրա: Իրերի ձեռքբերումը և օգտագործումը դիտվում են զուտ տարրական՝ կենցաղային մակարդակի վրա: Նյութական արժեքների զգալի մասը ձեռք է բերվում հափշտակության հաշվին: Ուրիշի աշխատանքի հաշվին այսօրինակ սպառումը բացատրվում է իր գոյությունը տվյալ սոցիալական խմբում միջին մակարդակով ապահովելու ձգտմամբ: Սուբյեկտն աշխատում է հաստատվել միջին մակարդակում, զոնե «ոչ պակաս, քան ուրիշները»: Որպես կանոն, շահ-սպառման «սուբյեկտները» հանդես են գալիս հափշտակությունների երկրորդական դրվագներում: Շահ-սպառման վտանգը կայանում է նրանում, որ որոշակի պայմանների առկայության դեպքում այն կարող է վերածվել ավելի տարածված տեսակի՝ շահ-հեղինակության:

**3. Շահ-հեղինակություն (պրեստիժ):** Դատական պրակտիկան ցույց է տալիս, որ շահադիտական մոտիվացիան ուղեկցվում է ոչ միայն կուտակման ձգտմամբ, այլ նաև հեղինակության հաստատման ցանկությամբ:

Հոգեբանական գրականության մեջ նշվում է, որ «սկսած անցումային տարիքից իր ազդեցությամբ բոլորից ուժեղ արժևորվում է հեղինակության պահանջմունքը», որը «կարող է հատուկ պայմաններում արգելափակել մյուս պահանջմունքները, սահմանափակել և հեռացնել հոգեբանական դաշտից դրանց գործունեության իմպուլսները»<sup>6</sup>:

Հասարակական կյանքում անհատի մոտ հեղինակության ուժեղ պահանջմունքի առկայությունը թույլ է տալիս նրան դիմակայել կյանքի որոշակի բացասական հանգամանքներին և պահպանել բարձր բարոյական հատկանիշներ: Սակայն, հեղինակության պահանջմունքի առկայությունը դեռ չի որոշում անձի համապատասխան սոցիալական ուղղվածությունը:

Ակնհայտ է, որ սուբյեկտի հեղինակության պահանջմունքը սերտորեն փոխկապված է այնպիսի բարոյահոգեբանական հատկանիշների հետ, ինչպիսիք են ազնվությունը, ինտելեկտուալությունը, նախաձեռնողականությունը: Որքան մեծ է բարոյական արժեքների նկատմամբ անձի դրական վերաբերմունքը, այնքան լավ: Այլ բան է անձի կողմից հեղինակության բարձրացման ձգտումը նյութական մակարդակում (նյութական արժեքների և ծառայությունների հեղինակություն): Այստեղ կարևոր է սուբյեկտի հեղինակության պահանջմունքի և օբյեկտիվորեն վաստակած հեղինակության

<sup>6</sup> Տե՛ս Чхартишвили Ш.Н. Некоторые вопросы психологии и педагогики социогенных потребностей. Тбилиси, 1974, էջ 32:

համապատասխանությունը:

Չեղինակության պահանջումները նյութական հարստության մակարդակում մինչև որոշակի աստիճան պայմանավորված է արտաքին միջավայրի օբյեկտիվ հանգամանքներով: Սրա հետ կապված, հեղինակության նոտիվացիայի էությունը շատ լավ է վերհանում Կ. Մարքսը՝ քննարկելով այն օրինակը, երբ անձի փոքր տունը բավարարում է նրա պահանջումներն ու հասարակական կյանքի պահանջներն այնքան ժամանակ, քանի դեռ շրջապատում բոլորը նման փոքր տներ ունեն: Բայց բավական է, որ փոքր տների կողքին հայտնվի պալատ և անձի տունը նրա աչքում ավելի է փոքրանում՝ վերածվելով փոքրիկ խրճիթի: Քաղաքակրթության զարգացման նման պայմաններում շարունակաբար փոքր տանը բնակվելը վկայում է այն մասին, որ դրա սեփականատերը պահանջկոտ չէ կամ զուսպ է իր պահանջների մեջ, բայց քանի որ հայտնվում է պալատը, իսկ վերջինիս սեփականատերն անընդհատ ավելացնում է իր ունեցածը, տնակի սեփականատերը համեմատության մեջ իր չորս պատերի մեջ իրեն զգում է առավել անհարմարավետ, առավել դժգոհ, առավել ստորացված<sup>7</sup>:

Անձի նման տրամադրվածությանը (իրավաչափ միջոցներով իր հեղինակությունը նյութական մակարդակում բարձրացնելու սահմանափակվածության պայմաններում) գումարվում

են շահադիտական ձգտումները, որոնք նախապայմաններ են ստեղծում հեղինակության պահանջումները հակահասարակական միջոցներով բավարարելու համար:

**4. Շահ-օգուտ (ուտիլիտարիզմ)**, որը

հիմնվում է ռոպեական օգուտի ձգտման վրա, որն անձը հիմնականում քաղում է մանր գողությունների և հանրային ցածր վտանգավորություն ունեցող այլ հակաիրավական արարքների ճանապարհով:

Ի տարբերություն նախորդների՝ շահի քննարկվող տարատեսակի դրոպատճառները մշտական բնույթ չեն կրում: Դրանք առաջանում են նպաստավոր պայմանների առկայության դեպքում (նյութական արժեքների հասանելիություն, թույլ պաշտպանություն և այլն) և սահմանափակվում են հիմնականում կենցաղային մանր իրերին կամ անմշան գումարին տիրապետելու ձգտմամբ:

Գրականության մեջ նշվում է, որ շահի ամենավտանգավոր տեսակը շահ-կուտակումն է<sup>8</sup>: Սակայն, ենթադրվում է, որ շահի առավել վտանգավոր տեսակը հնարավոր է վերհանել՝ «վտանգավոր է ու՞մ համար» հարցին պատասխանելով: Օրինակ՝ շահ-կուտակման դեպքում չափից ավել կուտակումը նպաստում է անհատի դեգրադացմանը: Շահի այս տեսակը վտանգավոր է առաջին հերթին անհատի համար: Իսկ կուտակողների

<sup>7</sup> Տե՛ս Մարкс К., Энгельс Ф. Соч. 2-е изд.Т. էջ 770:  
<sup>8</sup> Տե՛ս Кузнецова Н. Ф. Мотивация преступлений и тенденция ее изменения, էջ 14:

առանձնահատուկ կենսակերպը, նրանց առավել քիչ շփվողականությունը նվազեցնում են շրջապատողների վրա նրանց բացասական ազդեցությունը:

Հատկանշական է, որ շահի տարատեսակները կարող են հանդես գալ ամենատարբեր համակցություններով: Ամենից հաճախ շահադիտական ձգտումների էվոյուցիան սկսվում է առավել պարզունակ ձևերից (շահ-օգտագործում) մինչև առավել բարդ և վտանգավոր տեսակները՝ շահ- հեղինակություն, շահ-կուտակում:

Շահի դասակարգումն ունի գիտագործնական կարևոր նշանակություն, քանի որ կարող է դրվել շահադիտական հանցանք կատարողի տիպաբանության հիմքում որպես առանձին, ինքնուրույն հատկանիշ կամ անձի անձնային որակների, իրադրության հանգամանքների, հանցավոր վարքագիծը պայմանավորող դետերմինանտների և այլ գործոնների հետ փոխկապվածության մեջ:

Լինելով բավականին բարդ սոցիալ-տնտեսական, իրավական կատեգորիա՝ «շահ» իրավական եզրույթի հասկացությունը Հայաստանի օրենսդրությամբ ամրագրված է: Թերևս հարկ է նկատել, որ Ռուսաստանի Ղաշնության Գերագույն դատարանի որոշ պարզաբանումներում պարունակվում է շահադիտական շարժառիթի սահմանումը՝ առանձին տեսակի գործերի առնչությամբ: Այսպես՝ Ռ-Դ

Գերագույն դատարանի պլենումի 1999թ. հունվարի 27-ի՝ «Սպանության գործերով դատական պրակտիկայի վերաբերյալ» որոշման մեջ նշվում է՝ «**շահադիտական շարժառիթը** նպատակաուղղված է հանցավորի կամ այլ անձի համար նյութական օգուտ ստանալուն (դրամ, գույք կամ դրա ձեռքբերման իրավունք, բնակտարածության իրավունք և այլն) կամ նյութական պարտավորություններից ազատվելուն (գույքը վերադարձնելուց, հարկ վճարելուց, գույքային պարտականությունները կատարելուց, ալիմենտ վճարելուց և այլն)»<sup>9</sup>:

ՀՀ վճռաբեկ դատարանը շահադիտական նպատակի հասկացությունը պարզաբանել է խարդախության հանցակազմի շրջանակներում՝ Լիա Ավետիսյանի, հետագայում նաև Սամսոն Ղազարյանի վերաբերյալ կայացված որոշումներում<sup>10</sup>՝ արձանագրելով, որ «խարդախության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է **շահադիտական նպատակի** առկայությամբ, այսինքն՝ մինչև գույքը վերցնելը կամ գույքին տիրանալը հանցավորն ի սկզբանե նպատակ է ունենում հափշտակելու այն, չվերադարձնելու գույքը, չկատարելու խոստումը կամ պայմանագրային պարտավորությունները»:

Այսպիսով, շահի վերաբերյալ վերը նշված մեկնաբանությունները ներառում են մի շարք տեսանկյուններ՝ 1) անձնական

<sup>9</sup> Տե՛ս Бюллетень Верховного Суда РФ 1999. № 3. էջ 4:

<sup>10</sup> Տե՛ս 24.02.2011թ. ԵԿԴ/0176101109 և 13.09.2013թ. ԵԿԴ/020101112 որոշումները:

ազահության ձգտում՝ արտահայտված հակաօրինական ճանապարհով գույքին տիրանալու ցանկությամբ, 2) նյութական ծախսերից խուսափելու ցանկություն (ալիմենտ վճարելուց, պարտքը, գույքը վերադարձնելուց հրաժարվել և այլն), 3) այլ անձանց շահույթով ապահովելու ձգտում:

Որոշ դեպքերում նշված շահադիտական ձգտումները կարող են դրսևորվել այլ դրդապատճառներով գույքորդված: Այսպես, այլ անձին կամ կազմակերպությանը հարստացնելու ձգտումը ուրիշի գույքին վնաս պատճառելու եղանակով կարող է հանդես գալ անձի անհատական, մասնավոր նպատակի իրականացման միջոց: Այսպես, ապօրինի կերպով գույքը մի սեփականատիրոջից, տիրապետողից մեկ ուրիշին փոխանցելը առանց անձնապես հարստանալու ձգտման կարող է նպատակ հետապնդել առավելություն ձեռք բերել մրցակիցների շրջանում, բարձրացնել սեփական հեղինակությունը և այլն:

Իրավակիրառ պրակտիկայում շահադիտական շարժառիթը դասվում է, այսպես կոչված, «բացասական» շարժառիթների շարքին, ինչն ընկած է բազմաթիվ հակաիրավական արարքների հիմքում, հատկապես այնպիսի հանրորեն վտանգավոր արարքների հիմքում, ինչպիսիք են սեփականության դեմ ուղղված ոտնձգությունները: Որպես կանոն, շահադիտական հանցագործությունները

(գողություններ, կողոպուտներ, ավազակություններ և այլն) ասոցացվում են միայն շահադիտական շարժառիթի հետ: Կրիմինալոգիական գիտության զարգացման սկզբնական ժամանակահատվածում ենթադրվում էր, որ անձը, ով, ենթադրենք, գողություն է կատարել, գործել է շահադիտական մոտիվացիայով: Շատ դեպքերում դա վիճարկելի չէ, սակայն, անհրաժեշտ է նաև նկատի ունենալ, որ շարժառիթի կապն արարքի հետ ոչ միշտ է միանշանակ, ինչպես կարող է թվալ առաջին հայացքից: Շահադիտական դրդապատճառի հաստատումը հաճախ դժվար է, քանի որ այն կարող է դրսևորվել հասարակական օգուտակար վարքագծով և ընդհակառակը՝ սոցիալապես ողջունելի դրդապատճառը կարող է հանգեցնել հակահասարակական վարքագծի:

Այս հարցին պարզեցված լուծում է առաջարկում Բ. Ս. Վոլկովը: Նա գրում է. «դատապարտելով դրդապատճառը՝ մենք դատապարտում ենք հենց անձի վարքագիծը, հավանություն տալով վարքագծին՝ մենք հավանություն ենք տալիս նաև այն դրդապատճառին, որով անձը ղեկավարվել է: Արարքները չեն կարող բարի լինել, եթե բարի չեն այն դրդապատճառները, որոնցով անձը ղեկավարվել է դրանք կատարելիս: Այսպես՝ բացասական շարժառիթով հնարավոր չէ բարիք գործել, այնպես, ինչպես բարի մտադրությունները բացառում են չարիք պատճառելը»<sup>11</sup>:

<sup>11</sup> Ст' u Волков Б. С. Мотивы преступлений .Казань , 1982. էջ 14:

Չեղինակի տեսակետից ակնհայտ է դառնում, որ միատեսակ արարքները կատարվում են հստակորեն սահմանված դրդապատճառներով:

Մեր կարծիքով, դժվար է համաձայնել այս տեսակետի հետ, քանի որ դրդապատճառները (մտադրությունները) և դրանց արդյունքում կատարված արարքները հասարակական բնույթով կարող են համընկնել, սակայն կարող են նաև հակադրվել միմյանց: Ակնհայտ է, որ, օրինակ, իրավաչափ վարքագծի հիմքում կարող են լինել ամենատարբեր դրդապատճառներ՝ սկսած իրավունքի նորմերի հետ ներքին համաձայնությունից մինչև քրեական պատասխանատվության և պատժի ենթարկվելու վախը: Դրդապատճառին տրված բարոյական գնահատականը մեխանիկորեն տեղափոխելը արարքի վրա հաշվի չի առնում արարքի կատարման պայմանները, որոնք նույնպես անհրաժեշտ է դիտարկել և գնահատել բարոյական նորմերի տեսանկյունից: Ընդգծելով վարքագծի մոտիվացիայի կարևորությունը՝ Ս. Պ. Չուբինսկին նկատում է՝ «Չիմանալով անձի վարքագծի շարժառիթը, մենք չենք կարող կատարվածին բարոյական գնահատական տալ: Լավ արարքը կարող է լինել հիմար շարժառիթի արդյունք և հակառակը»:

Անձի վարքագծի և մոտիվացիայի բարոյական գնահատականների տարբերակումը թույլ է տալիս անհատականացնել քրեական պատաս-

խանատվությունն ու պատիժը, խորապես թափանցել անձի ներանձնային ոլորտը: Սրա հետ կապված, ներկայումս որոշ քրեագետներ քննադատության են ենթարկում շահադիտական դրդապատճառին տրված բնորոշումը՝ որպես նյութական օգուտ ստանալու կամ նյութական ծախսերից խուսափելու ցանկություն, որն իրագործվում է ուրիշի գույքն ապօրինաբար վերցնելով, այն հիմնավորմամբ, որ այս բնորոշումը չի արտացոլում շահադիտական մոտիվացիայի խորքային էությունը, դրա իմաստը: Բանն այն է, որ նյութական օգուտ ստանալը կամ ծախսերից խուսափելը մակերեսային դրդապատճառներ են, միջոց՝ իրագործելու մարդու խորքային, իմաստային դրդապատճառներ: Քրեագետների այս խումբը գտնում է, որ շահադիտական դրդապատճառն անձի ինքնահաստատման պահանջումների, իր կենսաբանական և սոցիալական կարգավիճակը պաշտպանելու դրսևորումն է, ուստի շահադիտական մոտիվացիան ուրիշի գույքի հաշվին ինքնահաստատվելու, կենսաբանական և սոցիալական ստատուսը պաշտպանելու անգիտակցական մղումն է<sup>12</sup>:

Շահադիտական մոտիվացիայի տարբեր տեսակների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանցից ոչ մեկը կապված չէ գուտ նյութական օգուտ ստանալու հետ. բոլոր դեպքերում էլ նյութական օգուտները, նյութական միջոցները հանդիսանում են ոչ թե վերջնական նպատակ, այլ նպատակին հասնելու

<sup>12</sup> Տե՛ս Ա. Գաբուլյան, Կրիմինոլոգիա, ԵՊՀ հրատ. էջ 68:

միջոց: Այսպես, կարիքի դրդապատճառն առաջին հայացքից կապված է զուտ նյութական օգուտ ստանալու ցանկության հետ, բայց իրականում դրա խորքում ընկած է կենսաբանական ստատուսը պաշտպանելու ցանկությունը: Կամ, այսպես կոչված, «պրեստիժային» շահադիտական շարժառիթների հիմքում, երբ անձը ձգտում է այնպիսի նյութական բարիքների տիրապետման, նյութական բարեկեցության այնպիսի մակարդակի, որը բնութագրական է իր անմիջական միջավայրին և ապահովում է համապատասխան ապրելակերպ, ընկած է ինքնահաստատման պահանջումները: Նույնիսկ շահադիտական այնպիսի դրդապատճառը, ինչպիսին կուտակելու ձգտումն է, չի կարող դրսևորվորվել զուտ նյութական բարիքներ կուտակելու ցանկությամբ, այլ ստրատեգիական խնդիրներ է լուծում<sup>13</sup>:

Հարկ է նշել, որ շահադիտական մոտիվացիան միատարր չէ: Կրիմինալոգիայում առանձնացնում են շահադիտական մոտիվացիայի տարբեր դրսևորումներ: Այսպես, Վ.Վ. Լուսենը առաջարկում է շահադիտական մոտիվացիան բաժանել հետևյալ խմբերի՝

1. փողի, նյութական միջոցների կուտակման ծարավ, որը կարող է դրսևորվել ազահությամբ, ընչաքաղցությամբ,
2. նյութական բարեկեցության, հարմարավետության ապահովման

ցանկություն, արժեքավոր իրերի ձեռքբերման ձգտում,

3. ալկոհոլի, թմրանյութերի, ազատ կենսակերպ վարելու ձգտում, որը պահանջում է նյութական ծախսեր,

4. ծառայության սխալ հասկացված շահ, կարիերիստական հավակնություններ վերադասի հավանությանն արժանանալու, ծառայության համար անհրաժեշտ գործարար կապեր ստեղծելու և պահպանելու ցանկություն,

5. անձնական նյութական կարիք (ժամանակավոր կամ հարաբերականորեն երկարատև)՝ կենցաղային պահանջները բավարարելու, առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու, ընտանիքին օգնելու ձգտում և այլն<sup>14</sup>:

Ներկայումս որպես շահադիտական մոտիվացիայի տարածված և միաժամանակ բավականին բարձր հանրային վտանգավորություն ունեցող տեսակ քննարկվում է իշխանության հասնելու տենչը, ինչը հաճախ իրականացվում է կազմակերպված հանցավորության կամ հանցավոր համագործակցության ճանապարհով:

Կրիմինալոգիայում ընդունված է շահադիտական հանցավորությունը դասակարգել նաև հետևյալ խմբերի՝

1. ընդհանուր շահադիտական հանցավորություն,

<sup>13</sup> Տե՛ս Ա.Գաբուզյան, Կրիմինոլոգիա, ԵՊՀ իրատ. նույն տեղում:

<sup>14</sup> Տե՛ս Преступное поведение: мотивация, прогнозирование, профилактика, М., 1980, էջ 95:



- 2. տնտեսական հանցավորություն,
- 3. կոռուպցիոն հանցավորություն,
- 4. հարկային հանցավորություն:

Քրեաիրավական պաշտպանության տակ առնված հարաբերությունների բնույթից կախված՝ առանձնացվում են նաև շահադիտական հանցավորության հետևյալ 2 առավել տարածված տեսակները՝

1. սեփականության դեմ ուղղված շահադիտական հանցագործություններ (ավագակություն, կողոպուտ, գողություն, խարդախություն, յուրացում, վատնում, առանձնակի արժեք ունեցող առարկաների հափշտակություն, հափշտակություն, որը կատարվել է համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ, շորթումի),

2. տնտեսական գործունեության ոլորտում կատարվող շահադիտական հանցագործություններ (կանխամտածված սնանկություն, կեղծ սնանկություն, առևտրային կաշառք, հակամրցակցային գործունեություն և այլն)<sup>15</sup>:

Շահադիտական մոտիվացիայով հաճախ կատարվում են նաև շրջակա միջավայրի դեմ ուղղված հանցագործություններ (ջրերն աղտոտել, ապօրինի որս, անտառների վնասում կամ ոչնչացում և այլն), հասարակական անվտանգության դեմ ուղղված (ահաբեկչություն, պատանդ վերցնել և այլն), պետության սահմանադրական կարգի և անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ (պետական

դավաճանություն, լրտեսություն և այլն) հանցագործություններ: Շահադիտական մոտիվացիայով կատարվող հանցագործություններ առկա են նաև մարդու կյանքի դեմ ուղղված (շահադիտական դրդումներով կամ պատվերով սպանություններ), մարդու անձնական ազատության դեմ ուղղված (շահադիտական դրդումներով մարդու առևանգում), բնակչության առողջության դեմ ուղղված (թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) մյուսեր հափշտակել կամ շորթել), կառավարման կարգի դեմ ուղղված (փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ հափշտակելը կամ վնասելը, որը կատարվել է շահադիտական դրդումներով) հանցագործությունների շարքում:

Հետևաբար, դժվար է համաձայնել վերոնշյալ դասակարգումների հետ, քանի որ **տեսականորեն հնարավոր է ցանկացած դիտավորյալ հանցագործության կատարումը՝ կապված անձի շահադիտական բնույթի շահագրգռվածության հետ: Նման պայմաններում շահադիտական շարժառիթը կարող է հանդես գալ ոչ միայն որպես հիմնական, դոմինանտ շարժառիթ, այլև միջնորդավորված, անուղղակի կամ օժանդակ մոտիվացիա, նպատակ:**

Առավել արդարացի է թվում շահադիտական հանցավորության դասակարգումը՝ հիմքում ունենալով շահադիտական հանցագործությունների օբյեկտիվ կողմի առանձնահատկու-

<sup>15</sup> Տե՛ս Криминология М., 1997, էջ 101:

թյունները: **Ըստ այդմ, մեր կարծիքով, շահադիտական հանցավորությունը կարելի է բաժանել հետևյալ տեսակների՝**

**1. բռնության հետ զուգորդված շահադիտական հանցագործություններ կամ շահադիտական-բռնի մոտիվացիայով կատարվող հանցագործություններ (ավազակություն, բանդիտիզմ, մարդուն առևանգում և այլն),**

**2. ծառայողական դիրքն օգտագործելով կատարվող շահադիտական հանցագործություններ (կաշառակերություն, յուրացում, վատնում և այլն),**

**3. բռնության գործադրման կամ ծառայողական դիրքը օգտագործելու հետ չկապված շահադիտական հանցագործություններ (զողություն, խարդախություն, մարդկանց առևտուր և այլն):**

Շահադիտական հանցագործությունների մեջ առանձնացվում է մի խումբ, որն իր սոցիալական էությամբ վերաբերում է շահ, օգուտ ստանալուն. խոսքը հափշտակությունների մասին է: Քրեական իրավունքի տեսության մեջ տարածում գտած տեսակետի համաձայն՝ հափշտակությանը բնորոշ է շահ ստանալը որպես նպատակ կամ որպես շարժառիթ: Իսկ այն հարցը, թե ի՞նչն է հանդիսացել այդ նպատակի կամ շարժառիթի ակունքը, սկզբնաղբյուրը, տարբեր կերպ է լուծվում: Ա. Ի. Սանտալովը նշում է, որ հափշտակությունն առանց շահադիտական նպատակի անհնար է: Սրա հետ մեկտեղ նկատում է հետևյալը՝

«հափշտակության եղանակով շահ ստանալը գույքն ապօրինի և անհատույց կերպով իրենը կամ մեկ ուրիշինը դարձնելն է: Վերջին դեպքում ապահովվում է ոչ թե այն անձի՝ շահ ստանալու ձգտումը, ով փոխանցել է պետական կամ հասարակական գույքը, այլ նրա, ով այն ստանում է անհատույց (օրինակ՝ նյութական միջոցների համար պատասխանատու անձի կողմից իրեն վստահված գույքի պարբերաբար փոխանցումը այն անձին, ով դրա նկատմամբ որևէ իրավունք չունի):<sup>16</sup>

Ա. Ի. Սանտալովի վերոնշյալ դիրքորոշումից հետևում է՝ ուրիշի գույքի ցանկացած անհատույց փոխանցում հոգուտ երրորդ անձի պետք է վկայի երրորդ անձի մոտ շահադիտական շարժառիթի առկայության մասին: Ընդ որում, այն անձի արարքը, ով փաստացի կատարել է հափշտակությունը, սակայն ուրիշի հաշվին չի հարստացել, հափշտակության համար չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության այնքանով, որքանով որ նրա մոտ բացակայում է շահադիտական շարժառիթը: Հակառակ սրան, անձինք, ովքեր նյութական միջոցներ են ստացել ֆինանսական միջոցների համար պատասխանատու անձից կամ պաշտոնատար անձից՝ առանց գիտակցելու, որ նրանք գույքի օրինական տիրապետողը չեն, ենթակա են քրեական պատասխանատվության, քանի որ նրանք անհատույց տիրացել

<sup>16</sup> См. и Курс советского уголовного права. В 5 т./Под ред. Н. А. Беляева . М.Д.Шаргородского.Т.3. Часть Особенная. Л. 1973. էջեր 366-368:

են ուրիշի նյութական միջոցներին: Սրանից հեղինակը գալիս է այն համոզման, որ՝ կա՛մ պետք է առանց շահադիտական շարժառիթի գործած անձին ազատել քրեական պատասխանատվությունից, կա՛մ հնարավոր համարել հափշտակությունն առանց շահադիտական նպատակի:

Ս. Ֆ. Միլյուկովը առաջարկում է բացառել շահադիտական նպատակի մասին նշումը հափշտակության օրենսդրական ձևակերպման մեջ և այն բնորոշել որպես «հանրորեն վտանգավոր, հակաիրավական արարք, որն ուղղված է ուրիշի գույքին տիրանալուն՝ այն որպես իր սեփական գույք տնօրինելու կամ մեղավորի կամ այլ անձի օգտին այն առանձնացնելու համար»<sup>17</sup>:

Հափշտակության նպատակն ու շարժառիթները ուսումնասիրելով՝ Ս.Ս. Կոչոյին այն տեսակետն է արտահայտում, որ «հափշտակության պարագայում շահադիտական մոտիվացիայի առկայությունը պարտադիր չէ, իսկ հափշտակության նպատակը չի կարող անվանվել շահադիտական. մեղավոր անձի նպատակը ապօրինի հարստանալն է, ուրիշի գույքի հաշվին շահույթ ստանալը, յուրացնելը, սպառելը»<sup>18</sup>: Սակայն, ըստ էության, հենց այս նպատակներն են, որ շահադիտական են

համարվում<sup>19</sup>:

Հեղինակների մեկ այլ խումբ այն կարծիքն է արտահայտում, որ շահադիտական նպատակն իրենից բոլոր դեպքերում ներկայացնում է նյութական օգուտ ստանալու ձգտում բոլորի կամ գոնե հափշտակության մասնակիցներից մեկի համար<sup>20</sup>: Ակնհայտ է, որ շահը բնորոշ է ցանկացած հափշտակությանը, իսկ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իր արտահայտությունն է գտնում բոլորի կամ հափշտակության անգամ մեկ հանցակցի մոտիվացիայում: Նման պայմաններում հնարավոր է դառնում քրեական պատասխանատվության ենթարկել այն անձին, ով խմբակային հափշտակության կատարման մեջ անձնական շահագրգռվածություն չի ունեցել: Այստեղ առավել կարևոր է հաստատել կատարված արարքում շահադիտական շարժառիթի առկայությունը, քանի որ շատ դեպքերում հափշտակության առանձին մասնակիցների մոտ բացակայում է շահադիտական նպատակը: Նրանք հաճախ ղեկավարվում են այնպիսի շարժառիթներով, ինչպիսիք են կեղծ հասկացված ընկերասիրությունը, հափշտակության մյուս մասնակիցների կողմից գործադրված սպառնալիքը, վախը: Հաճախ խմբակային գողություններին մասնակցած անձինք,

<sup>17</sup> Տե՛ս Милуков С. Ф. Российское уголовное законодательство. СПб., 2000. էջ 232:

<sup>18</sup> Տե՛ս Кочоу С. М. Ответственность за корыстные преступления против собственности, М., 2000. էջ 114:

<sup>19</sup> Տե՛ս է. Բ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» Հրատարակչություն, Երեւան, 1976, էջ 1093, Ожегов С. И. Словарь русского языка. М., 1987. էջ 242:

<sup>20</sup> Տե՛ս Андреева Л.А., Волженкин Б.В. Некоторые вопросы квалификации хищений социалистического имущества, Л., 1974. էջ 142:

բացատրելով իրենց վարքագիծը՝ նշում են. «Ես ինձ համար կոպեկ չեն վերցրել»: Իրոք անձնական հարստացման նպատակ նրանք չեն ունենում, այլ միայն նպաստում են հանցակիցների հանցավոր ճանապարհով հարստացմանը:

Սակայն, բավարարելով այլ անձանց նյութական կարիքները՝ մեղավոր անձը միաժամանակ դրսևորում է իր թաքնված դրդապատճառները, շահադիտական դիրքը, որը ներքուստ մոտ է անմիջականորեն հարստացած անձանց դիրքորոշմանը: Վերջիններիս հանկարծակի հարստացումը վկայում է շահադիտական դիրքորոշման առկայության մասին նաև այն անձի մոտ, ով նպաստել է դրան: Այլ կերպ ասած, եթե սուբյեկտը գիտակցված նպաստել է այն վարքագծին, որը ինքը համարում է ուրիշների կողմից ընդունելի, ապա դա վկայում է նաև իր ներքին համաձայնության մասին, ինչը նշանակում է, որ տվյալ անձը հոգեբանորեն ունի նույն շահադիտական ձգտումները, ինչպիսիք ունեն անօրինական ճանապարհով (ուրիշի սեփականության հաշվին) հարստացած անձինք: Այսինքն, «շահամուլ» կարելի է համարել նաև այն անձանց, ովքեր ձգտում են ապահովել նյութական արժեքներով ուրիշներին:

Այս տեսանկյունից պետք է նկատել, որ հափշտակության որակման համար անհատական հանցավոր գործունեության դեպքում պարտադիր է սուբյեկտի շահադիտական հետաքրքրասիրության,

շահագրգռվածության վերհանումը, հաստատումը: Դրա բացակայությունը բացառում է արարքը հափշտակություն որակելը: Այլ հարց է, որ շահագրգռվածությունը չի կապվում միայն նյութական միջոցների ձեռքբերման հետ: Բ. Վ. Վոլժենկինի կարծիքով, շահադիտական նպատակ ասելով՝ հասկացվում է ուրիշի գույքին ապօրինի, անհատույց տիրանալը՝ 1) հոգուտ մեղավորի, 2) հոգուտ մեղավորին հարազատ անձի, ում նյութական վիճակով նա մտահոգվում, հետաքրքրվում է, 3) հոգուտ հափշտակության այլ հանցակից<sup>21</sup>:

Անխոս, վերոնշյալ դեպքերում շահադիտական նպատակը վառ է արտահայտված: Մյուս կողմից, այս բավականաչափ լայնածավալ բնորոշումը չի ներառում մի շատ կարևոր տեսանկյուն: Խոսքն այն դեպքերի մասին է, երբ գույքը հափշտակվում և փոխանցվում է մի կողմնակի անձի, ով անգամ չի կասկածում այդ գույքի հանցավոր ծագմանը: Եթե ելնենք շահադիտական նպատակի վերոնշյալ բնորոշումից, չի կարելի քրեական պատասխանատվության ենթարկել այն անձին, ով գաղտնի կամ բացահայտ, անգամ բռնության գործադրմամբ, ապօրինաբար տիրացել է ուրիշի գույքին՝ այն այլ անձին կամ կազմակերպությանը փոխանցելու համար՝ առանց անձնապես նյութական օգուտ ստանալու նպատակի: Օրինակ՝ անձը կատարում է ավազակային հարձակման եղանակով հափշտակություն՝ ապօրինաբար ձեռք բերված գույքը

<sup>21</sup> Ст'и Волженкин Б.В. Служебные преступления. М., 2000 էջ 153:

բարեգործական ընկերությանը հանձնելու համար:

Սակայն, ներկայիս շուկայական հարաբերությունների զարգացման արդի պայմաններին զուգընթաց մասնավոր սեփականատիրական հարաբերությունների պաշտպանությունը պահանջում է տեսության և պրակտիկայի համընթաց զարգացում, ինչի արդյունքում իրավակիրառ պրակտիկայում շահադիտական մոտիվացիան ներկայումս լայնածավալ մեկնաբանության է ենթարկվում՝ չկապվելով միայն անձնական նյութական շահագրգռվածության, անձնական նյութական կարիքի հետ: Այս առումով տիպական է ՀՀ Երևանի քրեական դատարանի 2008թ. կայացված դատավճիռը, որով դատարանը ՀՀ քր. օր. 177 հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով և 34-177 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 34-177 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցանքներում մեղավոր ճանաչեց Ա. Ս. Գրիգորյանին, ով հափշտակությունների արդյունքում ձեռք բերված ընդհանուր գումարից 10.852.100 ՀՀ դրամի չափով նվիրատվություններ էր կատարել

գիշերօթիկ դպրոցներին, մանկական ճամբարին, միաբանությանը, բարեգործական հիմնարկներին<sup>22</sup>:

**Այսպիսով՝ շահադիտական հանցավորությունը հանցավորության բաղկացուցիչ մաս համարվող հանցանքների համակցություն է, որոնք կատարվել են շահադիտական մոտիվացիայով:** Շահադիտական հանցավորության վտանգավորությունը կայանում է նրանում, որ այն (խոսքն այս դեպքում հատկապես պաշտոնական դիրքի չարաշահումների, պետական ունեցվածքի և ֆինանսական միջոցների հափշտակության մասին է) հանգեցնում է պետության տնտեսական, սոցիալական և քաղաքական համակարգերի դեգրադացման, այդ թվում՝ զինված ուժերի և ողջ պետական համակարգի անվտանգության խաթարման, իսկ համատարած կոռուպցիան, մեծամասշտաբ խարդախությունները ֆինանսական ոլորտում, որոնցից տուժում են միլիոնավոր մարդիկ, հուսալքում են քաղաքացիներին, նրանց դարձնում ընդդիմադիր հայացքներ ունեցողներ:

<sup>22</sup> Տե՛ս Երևանի քրեական դատարանի ԵԶԴ 0057/01/08 գործով կայացված դատավճիռ, datalex.am:

*Անփոփում*

«Շահադիտական հանցավորության կրիմինալոգիական բնութագրի որոշ հիմնահարցեր» վերտառությամբ հոդվածում փորձ է արվել ճշգրտել շահադիտական հանցավորության սահմանները, բացահայտել շահադիտական մոտիվացիայով կատարվող հանցագործությունների առանձնահատկությունները, տալ շահադիտական մոտիվացիայով կատարվող հանցագործությունների դասակարգումը: Հոդվածում անդրադարձ է կատարվել նաև հափշակությունների՝ որպես տարածվածության առավել բարձր մակարդակ ունեցող շահադիտական հանցագործությունների նպատակի, շարժառիթի առանձնահատկություններին:

**Բանալի բառեր**-շահադիտական հանցավորություն, շահ, մոտիվացիա, պահանջմունք, շարժառիթ, դրդապատճառ, հափշտակություն

**Ключевые слова** - корыстная преступность, выгода, мотивация, потребность, побуждение, хищение

**Key words** - mercenary crime, benefit, motivation, need, motive, inducement, thrtf



# ՄԻՎՈՐՎԵԼՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱԾԱԿՄԱՆ ԿՍՔԵՐԸ

## Միեր ՍԱՄԱՉԱՆՅԱՆ

իրավաբանական գիտությունների թեկնածու,  
ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի խորհրդակց

Բնական ազատությունը, ի սկզբանե, համարվում է բացարձակ երևույթ, որով մարդն օժտված է ծննդյան պահից: Միևնույն ժամանակ այն ձեռք է բերում սահմանափակ բնույթ, քանի որ հասարակության մեջ անհատն ապրում է իրեն նման էակների միջավայրում, որոնց շահերն ու պահանջները միանգամայն տարբեր են, իսկ երբեմն՝ նաև մտնում են խոր հակասությունների մեջ: Նման դեպքերում, եթե յուրաքանչյուրը փորձի իրացնել միայն իր բացարձակ ազատությունը, ապա անհնարին կլինի հասնել համասոցիալական նպատակների իրագործմանը, առանց որոնց հասարակությունը, բնականաբար նաև մարդը, գոյատևել չի կարող: Այստեղ էլ արդեն համասոցիալական նպատակների իրագործման նպատակով սահմանափակվում է անհատի ազատությունը: Հետևաբար, մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումը, ինչպես և իրականացումը, նույնպես բնական վիճակ է<sup>1</sup>:

Մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները սահմանադրորեն որպես բարձրագույն արժեք հռչակումը, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները ճանաչելը, պարտականությունը սահմանելը չի բացառում դրանց իրավաչափ սահմանափակման հնարավորությունը: Իրավունքներից օգտվելը սերտորեն կապված է նաև

պարտականությունների և հնարավոր սահմանափակումների հետ<sup>2</sup>: Քանի որ անհրաժեշտ է գտնել խելամիտ հավասարակշռություն անհատի և պետության, անհատի և հասարակության շահերի միջև, որը կարևոր նախապայման է հանդիսանում իրավական պետության համար: Մարդու կյանքը և հասարակությունը ընկած են երկու հարթությունների միջև՝ մեկում ազատությունն է, մյուսում՝ սահմանափակումը<sup>3</sup>:

Տեսական գրականության մեջ «իրավունքների սահմանափակում» հասկացության բովանդակության վերաբերյալ միասնական մոտեցում չկա: Հեղինակների մի մասն այդ հասկացության հետ մեկտեղ օգտագործում է «իրավունքների սահմաններ» ձևակերպումը: Որպեսզի կարողանանք բացահայտել «իրավունքների սահմանափակում» հասկացության բովանդակությունը, փորձենք դիմել միջազգային փաստաթղթերի օգնությանը: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը և մի շարք այլ փաստաթղթեր օգտագործում են «սահմանափակում» եզրույթը: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրն օգտագործում է «պետությունների նահանջն իրենց պարտավորություններից» եզրույթը:

<sup>1</sup> Տե՛ս Այվազյան Վ., Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Խմբ. Հարությունյան Գ., Վաղարշյան Ա., Երևան, Իրավունք, 2010, էջ 510:  
<sup>2</sup> Տե՛ս Саблин Д.А., Права человека. Учебное пособие. Оренбург. ОГУ. 2004. էջ 27:  
<sup>3</sup> Տե՛ս Ниринг С. Свобода: обещание и угроза. Пер. с англ. М. Прогресс. 1966. էջեր 136-138:

Սարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիան, Եվրոպական կոնվենցիան օգտագործում են «սահմանափակում» և «նահանջն իրենց պարտավորություններից» եզրույթները՝ դիտարկելով դրանք որպես հավասարաբեռն հասկացություններ: Այսպիսով՝ միջազգային իրավական փաստաթղթերի բովանդակությունից երևում է, որ «իրավունքների սահմանափակում» հասկացության իրավական բովանդակությունը դիտարկված է նեղ իմաստով: Սահմանափակումը սահմանադրությամբ և օրենքով արդեն ամրագրված և սահմանադրված՝ պետության կողմից ինչ-ինչ կարևոր շահերից ելնելով կոնկրետ իրավունքի բովանդակության նեղացումը, նվազեցումը, բացառումն է: Ձևական իրավական առումով մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումը նշանակում է օրենսդրությամբ նախատեսված դեպքերում դրանց իրականացման իրավական անհնարինությունը կամ հավասարապես օրենքով սահմանված դրանց ծավալի կրճատումը<sup>4</sup>:

Այսպիսով՝ անսահման ազատությունը կարող է հանգեցնել ինչպես հանրության շահերի, այնպես էլ այլ անձանց իրավունքների հետ բախման<sup>5</sup>: Նման հնարավոր բախումները կանխելու և տարբեր շահերն ու իրավունքները միմյանց հետ համաձայնեցնելու համար սկզբունքորեն չի բացառվում հիմնական իրավունքներով պաշտպանված իրավական բարիքներին պետության միջամտելու իրավունքը: Պետությունը նման միջամտությունն իրականացնում է հիմնական իրավունքների սահմանափակումների միջոցով: Ժամանակակից սահմանադրական իրավունքը հիմնական իրավունքների

սահմանափակումների համար դնում է խիստ պահանջներ. ա) սահմանափակման են ենթակա ոչ թե բոլոր իրավունքները, այլ որոշակի խումբ իրավունքներ, բ) այդ իրավունքները ենթակա են սահմանափակման միայն օրենքով, գ) սահմանափակման ենթակա հիմնական իրավունքները կարող են սահմանափակվել միայն սահմանադրությամբ սահմանված հիմքերի առկայության դեպքում, դ) սահմանադրությամբ սահմանված հիմքերի առկայության դեպքում ևս հիմնական իրավունքները չեն կարող սահմանափակվել ցանկացած ծավալով: Ելակետային համարելով այլոց իրավունքների և բնականոն համակեցության երաշխավորումը, որպես մարդու իրավունքների սահմանափակման գլխավոր և միակ չափանիշ, տարաբնույթ սկզբունքները, պայմանները և հիմքերը կոչված են ապահովելու և երաշխավորելու, որպեսզի այդ չափանիշից շեղում չլինի: Ուստի, պետության միջամտությունը, որը դրսևորվում է մարդու որոշ իրավունքների սահմանափակման միջոցով, պետք է միանշանակ ուղղորդվի այն սկզբունքներով (ոսկյա կանոններով), որոնք բխում են բուն սահմանափակման բնույթից, դրա հիմքերից և հանգամանքներից: Միայն այդ սկզբունքները պահպանելու դեպքում կարելի է խոսել սահմանափակումների, ճշտության մասին: Այդ սկզբունքներն են՝ համաչափությունը, օրինականությունը և իրավունքի էության սահմանափակման արգելքը (իրավունքի էության անխախտելիությունը)<sup>6</sup>:

Միավորվելու իրավունքը նույնպես չի կարող գոյություն ունենալ մեկուսացման պայմաններում, այն պետք է հավասարակշռվի հասարակության և պետության կենսական շահերի, ինչպես նաև մարդու այլ հիմնարար իրավունքների հետ: Միավորվելու

<sup>4</sup> Տե՛ս Այվազյան Վ., Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ. Խմբ. Հարությունյան Գ., Վաղարշյան Ա.: Երևան. Իրավունք, 2010, էջեր 508-509:

<sup>5</sup> Տե՛ս Երիցյան Ա, Սարդու իրավունքների և դրանց պաշտպանության հիմնախնդիրները գլոբալիզացիայի դարաշրջանում, Երևան, Փրինսփրինֆո, 2007, էջ 83:

<sup>6</sup> Տե՛ս Հարությունյան Գ.Գ., Սահմանադրական մշակույթ, պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Երևան, Նժար, 2005, էջեր 188-190:

իրավունքի ցանկացած սահմանափակում համատեղելի կլինի ՀՀ և ՌԴ սահմանադիրների կամքին, ինչպես նաև երկու երկրների միջազգային պարտավորություններին, եթե համապատասխանի ՀՀ Սահմանադրության 43-րդ և ՌԴ Սահմանադրության 55-րդ հոդվածներին, ինչպես նաև մարդու իրավունքների վերաբերող միջազգային պայմանագրերում նախատեսված պայմաններին:

Իրավական պետության սահմանադրական կարգավորումներում մի շարք հիմնական իրավունքների սահմանափակման հիմքերը սահմանված են բացառապես այդ իրավունքը սահմանող հոդվածներում, իսկ որոշ իրավունքների սահմանափակման հիմքերը սահմանված են ինչպես այդ իրավունքը սահմանող հոդվածներում, այնպես էլ՝ իրավունքների սահմանափակմանը վերաբերող առանձին հոդվածում: Հանդիպում են նաև սահմանադրություններ, որտեղ հիմնական իրավունքների սահմանափակման հիմքերը սահմանված են բացառապես իրավունքների սահմանափակմանը վերաբերող առանձին հոդվածում: Ի տարբերություն ՌԴ Սահմանադրության, որը հստակ չի սահմանում սահմանափակման ենթակա կոնկրետ իրավունքներ՝ դրանք թողնելով օրենսդրի հայեցողությանը, ՀՀ Սահմանադրությունն ուղղակի մատնացույց է անում, թե հատկապես որ իրավունքներն ու ազատություններն են ենթակա սահմանափակման և սպառնիչ կերպով թվարկում է այն բոլոր հիմքերը, որոնց առկայությամբ կարող են սահմանափակվել դրանք:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի համաձայն՝ մարդու և քաղաքացու Սահմանադրության 23-25, 27, 28-30, 30.1-րդ հոդվածներով, 32-րդ հոդվածի երրորդ մասով ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել

միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար: ՌԴ Սահմանադրության 55-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մարդու և քաղաքացու իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն դաշնային օրենքով այն չափով, որն անհրաժեշտ է սահմանադրական կարգի հիմունքների, բարոյականության, առողջության, այլ անձանց իրավունքների և օրինական շահերի, երկրի պաշտպանությունը և պետության անվտանգությունն ապահովելու նպատակով:

ՀՀ-ն և ՌԴ-ն ստանձնել են պարտավորություններ՝ երաշխավորելով մարդկանց միավորվելու ազատության իրավունքը, այդ իրավունքների սահմանափակումների հիմքում դնելով միջազգային իրավունքի սկզբունքներն ու նորմերը: Եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ միավորվելու իրավունքի իրականացումը ենթակա չէ որևէ տեսակի սահմանափակումների, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության ու հասարակական անդորրի, անկարգություններն ու հանցագործությունները կանխելու, այլ անձանց առողջությունն ու բարոյականությունը կամ նրանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով: Սույն հոդվածը չի խոչընդոտում օրինական սահմանափակումներ մտցնել զինված ուժերի, ոստիկանության և պետական վարչակազմի մեջ մտնող անձանց կողմից այդ իրավունքների իրականացման վրա: Միավորվելու իրավունքի սահմանափակման պայմաններն ամրագրված են նաև

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 22-րդ հոդվածի 2-րդ մասում, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների և ազատությունների մասին միջազգային դաշնագրում և մարդու իրավունքներին վերաբերող այլ միջազգային փաստաթղթերում:

Այսպիսով՝ միավորվելու իրավունքը կարող է սահմանափակվել և այդ սահմանափակումը համատեղելի կլինի ԳՅ և ՌԴ սահմանադրություններին, ինչպես նաև ԳՅ և ՌԴ միջազգային պարտավորություններին, եթե՝

1) սահմանափակումը նախատեսված է օրենքով, 2) սահմանափակումը հետապնդում է ԳՅ Սահմանադրության 43-րդ և ՌԴ Սահմանադրության 55-րդ հոդվածներով, ինչպես նաև մարդու իրավունքներին վերաբերող միջազգային պայմանագրերում նախատեսված որևէ իրավաչափ նպատակ, 3) սահմանափակումն անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում:

Յուրաքանչյուր կոնկրետ գործով միջամտության արդարացվածությունը որոշելու նպատակով պետք է անցկացվի հետևյալ թեստը.

- արդյոք վիճարկվող սահմանափակումը նախատեսված է օրենքով,
- արդյոք օրենքով նախատեսված տվյալ սահմանափակումը հետապնդում է ԳՅ Սահմանադրության 43-րդ և ՌԴ Սահմանադրության 55-րդ հոդվածներով, ինչպես նաև մարդու իրավունքներին վերաբերող միջազգային պայմանագրերում նախատեսված որևէ իրավաչափ նպատակ,
- արդյոք տվյալ սահմանափակումն

անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում:

Եթե վիճարկվող սահմանափակումը չի բավարարում օրենքով նախատեսված լինելու պահանջին, ապա արդեն առկա է միավորվելու իրավունքի խախտում: Ժողովրդավարական հասարակությունում վիճարկվող սահմանափակման անհրաժեշտության չափանիշն այլևս քննարկելու կարիք չի ունենա, եթե տվյալ սահմանափակումը չի հետապնդում ԳՅ Սահմանադրության 43-րդ և ՌԴ Սահմանադրության 55-րդ հոդվածներով, ինչպես նաև մարդու իրավունքներին վերաբերող միջազգային պայմանագրերում նախատեսված որևէ իրավաչափ նպատակ: Իրավական պետությունում միավորվելու իրավունքի սահմանափակումներն ընդունելի են, եթե միաժամանակ ապահովված են նշված երեք պայմանները:

Համաձայն ԳՅ Սահմանադրության 43-րդ հոդվածի և ՌԴ Սահմանադրության 55-րդ հոդվածի, ինչպես նաև մարդու իրավունքներին վերաբերող միջազգային-իրավական փաստաթղթերի, միավորվելու իրավունքի սահմանափակումները պետք է սահմանվեն օրենքով:

Միավորվելու իրավունքի սահմանափակման նախատեսումը միայն օրենքով՝ օրինականության սկզբունքի մասնավոր դրսևորում է հանդիսանում: Եթե երկրում իշխանությունն իրականացվում է ոչ թե իրավաչափորեն, այլ կամայականորեն, ապա մյուս սկզբունքների պահպանումն իմաստազրկվում է, իսկ տվյալ պետությունը ոչ թե «մի մասով», այլ ընդհանրապես հակաիրավական և հակաժողովրդավարական է դառնում<sup>7</sup>: Օրինականության սկզբունքն

<sup>7</sup> Տե՛ս Հարցեր և պատասխաններ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի վերաբերյալ, Երևան, ՀԱՐԴ ԸՆԴ ՍՈՖԹ, 2007, էջ 23:

օրենքով կարգավորվող հարաբերություններում կոնկրետացնում է ՀՀ և ՌԴ սահմանադրություններում ամրագրված իրավական պետության սկզբունքը, ինչպես նաև իրավական պետության սկզբունքից ածանցվող այն դրույթը, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Բացառապես օրենքով սահմանափակումների ամրագրումն անձին զերծ է պահում գործադիր իշխանության կողմից զուտ նպատակահարմարությամբ առաջնորդվելու վտանգից: Իրավական պետությունում միավորվելու հիմնարար իրավունքի ցանկացած սահմանափակում պետք է նախատեսված լինի օրենքով: ՌԴ Սահմանադրության 55-րդ հոդվածով նախատեսված է, որ միավորվելու իրավունքի սահմանափակումները պետք է սահմանվեն դաշնային օրենքով: Սույն սահմանադրական դրույթի տառացի մեկնաբանության արդյունքում կստացվի, որ միավորվելու իրավունքի սահմանափակումներ չեն կարող նախատեսվել դաշնային սահմանադրական օրենքներով: Սակայն, կարծում ենք, այս սահմանադրական նորմը պետք է մեկնաբանել ոչ միայն վերջինիս տառացի իմաստից, այլ այն նպատակի լույսի ներքո, ինչի համար այն նախատեսվել է<sup>8</sup>: Հաշվի առնելով վերոնշյալը, ՌԴ-ում միավորվելու իրավունքի սահմանափակումներ հնարավոր է նախատեսված լինեն նաև դաշնային սահմանադրական օրենքներով:

Այսպիսով՝ միավորվելու սահմանադրական իրավունքի ցանկացած սահմանափակում, որը կիրականացվի ներպետական օրենսդրությամբ

խախտումով, չի համապատասխանի օրենքով նախատեսված լինելու պահանջին<sup>9</sup>: Սակայն միավորվելու իրավունքի սահմանափակման օրենքով նախատեսված լինելու պահանջը չի նշանակում զուտ ձևական ամրագրում օրենքում, իրավունքի միջամտությունը պետք է ոչ միայն ուղղակի սահմանված լինի օրենքով, այլ նաև որոշակի պահանջներ ներկայացնի սահմանափակող օրենքի որակին, համապատասխանի իրավական որոշակիության սկզբունքին:

ՀՀ սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ 630 որոշման 11-րդ կետում՝ նշել է.

**«որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին»:**

ՌԴ սահմանադրական դատարանը նույնպես անդրադարձել է իրավական նորմի անորոշության անթույլատրելիությանը<sup>10</sup>:

Եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ օրենքով նախատեսված լինելու պահանջը նշանակում է, որ եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքին միջամտությունը պետք է ոչ միայն ուղղակի սահմանված լինի օրենքով, այլ նաև որոշակի պահանջներ ներկայացնի սահմանափակող օրենքի որակին: Օրենքը պետք է պատշաճ կերպով մատչելի լինի քաղաքացու համար, համապատասխան հանգամանքներում հնարավորություն ընձեռի քաղաքացուն կողմնորոշվելու, թե անհրաժեշտության դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվելու, բացի այդ օրենքի ցանկացած սահմանափակող նորմ պետք է ձևակերպված լինի բավարար ճշգրտությամբ,

<sup>8</sup> Իրավունքի մեկնաբանման թելեյոզիական մոտեցման համաձայն՝ համապատասխան իրավական ակտի նորմերը պետք է մեկնաբանվեն իրավական կարգավորման նպատակներից ելնելով:  
<sup>9</sup> St'u ECtHR Presidential Party of Moldova v. Russia, Judgment of 5 october 2004  
<sup>10</sup> St'u Постановление Конституционного суда РФ от 6 апреля 2004 г. N 7-П:

անհրաժեշտության դեպքում ստանալով իրավաբանական խորհրդատվություն՝ անձը հնարավորություն պետք է ունենա կանխատեսել այն հնարավոր հետևանքները, որոնք կարող են առաջանալ որոշակի հանգամանքներում<sup>11</sup>: Եվրոպական դատարանն իր մի շարք որոշումներում հատուկ կարևորություն է տվել միավորվելու իրավունքի սահմանափակումներ նախատեսող օրենքների կանխատեսելիությանը<sup>12</sup>: Այսպիսով՝ Եվրոպական դատարանը պահանջում է, որ ներպետական օրենքը շահագրգիռ անձանց համար իր որակով լինի մատչելի և հետևանքներով կանխատեսելի:

Վերոնշյալ պահանջներին համապատասխանելու համար ներպետական օրենսդրությունը պետք է պաշտպանության հնարավորություն պարունակի իշխանությունների կողմից միավորվելու իրավունքի ոտնձգությունների դեմ: Երբ խոսքը գնում է միավորվելու իրավունքի մասն հիմնարար իրավունքի մասին, օրենքը կհակասի իրավունքի զերակայության սկզբունքին, եթե գործադիր իշխանությանը տրամադրած հայեցողությունը լինի անսահման: Իհարկե, Եվրոպական դատարանն ընդունում է, որ օրենքները հնարավոր չէ բացարձակ ճշգրտությամբ ձևակերպել, սակայն, եթե օրենքը մատչելիության և կանխատեսելիության առումով այնքան անկատար է, որ չի նախատեսում նվազագույն պաշտպանություն կամայականությունից, ապա մասն օրենքի հիման վրա կատարված սահմանափակումը չի կարող համապատասխանել օրենքով նախատեսված լինելու պահանջին: Օրենքը պետք է բավարար չափով հստակ լինի, որպեսզի անհատը հնարավորություն ունենա

գնահատելու՝ արդյոք իր վարքագիծը կհանգեցնի օրենքի խախտման, և նախատեսի մասն խախտման հնարավոր հետևանքները: Որքան օրենսդրությունը կոնկրետ է, այնքան այնտեղ օգտագործվող լեզուն պետք է ճշգրիտ լինի: Օրենսդրության մեջ հստակ սահմանումների ներմուծումը շատ կարևոր է օրենքի հեշտ ըմբռնման ու կիրառման համար: Ներպետական օրենսդրության հստակությունը մեծապես կախված է կոնկրետ իրավական ակտի բովանդակությունից, այն ուղրտից, որն այդ ակտը կարգավորում է, և այն անձանց քանակից ու կարգավիճակից, որոնց ուղղված են այդ կարգավորումները<sup>13</sup>:

Իրավական որոշակիության վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-747 և ՍԴՈ-780 որոշումներում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «օրենսգրքում օգտագործվող առանձին հասկացությունների բովանդակությունը չի կարող ինքնաբավ լինեն: Դրանց բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում է ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ՝ նաև դատական պրակտիկայում»:

Սահմանափակման իրավաչափ նպատակների ձևակերպումների շեշտադրմամբ միավորվելու իրավունքի սահմանափակումներին առնչվող օրենքներն անխուսափելիորեն ներառում են անորոշության որոշակի աստիճան, որոնք պետք է բացահայտվեն իրավակիրառ պրակտիկայում, որը կարծում ենք այնուամենայնիվ, չի զրկում նրանց իրենց «իրավական բնույթից»:

Միավորվելու իրավունքի յուրաքանչյուր սահմանափակում պետք է ուղղված

<sup>11</sup> Տե՛ս ECtHR Sunday Times v. United Kingdom, Judgment of 26 April 1979, ECtHR Meltex Ltd and Mesrop Movsesyan v. Armenia, Judgment of 17 June 2008:  
<sup>12</sup> Տե՛ս ECtHR N.E. v. Italy, Judgment of 17 August 2001, ECtHR Maestri v. Italy, Judgement of 17 February 2004:  
<sup>13</sup> Տե՛ս ECtHR Metropolitan Church of Bessarabia v. Moldova, Judgment of 13 December 2001:



լինի ՀՀ Սահմանադրությունում և ՌԴ Սահմանադրությունում, ինչպես նաև մարդու իրավունքների վերաբերող միջազգային փաստաթղթերում սպառնիչ կերպով նշված արժեքների պաշտպանությանը: Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները հնարավոր են միայն այն չափով, որքանով դրանք անհրաժեշտ են համապատասխան հասարակական շահերին հետևելու համար: Այլ խոսքով, պետությանն արգելված է իրականացնել այնպիսի միջոցառումներ, որոնք անհրաժեշտ չափից ավելի են սահմանափակում սահմանադրական իրավունքներն ու ազատությունները<sup>14</sup>:

Նշված արժեքների պաշտպանությունն ընդունված է անվանել «իրավաչափ նպատակներ»<sup>15</sup>: Իրավունքների սահմանափակման նպատակների կարևորության մասին վկայում է այն, որ ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեն Գիյոն և ուրիշներն ընդդեմ Ֆրանսիայի գործն ուսումնասիրելիս առանձնացրել է այդ իրավաչափ նպատակները որպես իրավունքների թուլատրելի սահմանափակումների սահմանման առաջնային չափանիշներ<sup>16</sup>: ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեն մշակել է նաև նպատակի խիստ համապատասխանության սկզբունքը, որի համաձայն սահմանափակումներ կարող են սահմանվել միայն այն նպատակների համար, որոնք համար դրանք նախատեսված են և պետք է ուղղակիորեն կապված լինեն որոշակի նպատակի հետ:

Եվ ՀՀ Սահմանադրությունը, և ՌԴ Սահմանադրությունը, ինչպես նաև մարդու իրավունքների վերաբերող միջազ-

գային փաստաթղթերը սահմանում են միավորվելու իրավունքի սահմանափակման իրավաչափ նպատակների սպառնիչ ցանկը: ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի համաձայն դրանք պետական անվտանգությունը, հասարակական կարգի պահպանումը, հանցագործությունների կանխումը, հանրության առողջությունն ու բարոյականությունը, այլոց սահմանադրական իրավունքները և ազատությունները, պատիվը և բարի համբավն են: ՌԴ Սահմանադրության 55-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն միավորվելու իրավունքի սահմանափակման իրավաչափ նպատակներն են սահմանադրական կարգի հիմունքները, բարոյականությունը, առողջությունը, այլ անձանց իրավունքները և օրինական շահերը, երկրի պաշտպանությունը և պետության անվտանգությունը:

Եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն միավորվելու իրավունքի սահմանափակման իրավաչափ նպատակներն են պետական անվտանգությունն ու հասարակական անդորրը, անկարգություններն ու հանցագործությունները կանխելու անհրաժեշտությունը, այլ անձանց առողջությունն ու բարոյականությունը կամ նրանց իրավունքներն ու ազատությունները: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սահմանափակման իրավաչափ նպատակներն են պետական ու հասարակական անվտանգությունը, հասարակական կարգը, այլ անձանց առողջությունն ու բարոյականությունը կամ նրանց իրավունք-

<sup>14</sup> Տե՛ս Арутюнян А.Ш. Грамматика свободы (проблемы постсоветского реализма). Ереван АРТ. 2007, էջ 111:  
<sup>15</sup> Տե՛ս Հովհաննիսյան Վ., Գուկասյան Ջ., Հակոբյան Լ., Հակոբյան Լու., Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների մեկնաբանություն մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունք, Երևան, Տիգրան Մեծ, 2006, էջ 343:  
<sup>16</sup> Տե՛ս Прецедентные дела Комитета по правам человека/ Состовители Райя Хански и Мартин Шейнин, Института прав человека, Университет Або Академи (Турку). 2004. (07.09.2011) <http://www1.umn.edu/humanrts/russian/hrtsbook/Rhrcases-index.html>:

ներն ու ազատությունները պաշտպանելու անհրաժեշտությունը: Միավորվելու իրավունքի սահմանափակման իրավաչափ նպատակներ են ամրագրված նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների և ազատությունների մասին միջազգային դաշնագրում: Վերոհիշյալ ակտերով սահմանված սահմանափակումների նպատակները կիսում են նաև ԵԱՀԿ-ի անդամ պետությունները, ինչի մասին վկայում է այն փաստը, որ ԵԱՀԿ փաստաթղթերը չեն պարունակում սահմանափակումների իրավաչափ նպատակների սպառնիչ ցանկ, այլ հղում են կատարում վերոհիշյալ միջազգային փաստաթղթերին<sup>17</sup>:

ՀՀ Սահմանադրությամբ և ՌԴ Սահմանադրությամբ միավորվելու իրավունքի սահմանափակման իրավաչափ նպատակների միջև կան որոշակի տարբերություններ: Մի դեպքում այդ տարբերությունները կապված են իրավաչափ նպատակի ձևակերպման հետ, որոնք, որպես կանոն՝ սկզբունքային նշանակություն չունեն, իսկ մյուս տարբերությունները կապված են այնպիսի իրավաչափ նպատակ նախատեսելու հետ,

որը նախատեսված չէ ՀՀ Սահմանադրությամբ: ՌԴ Սահմանադրությունը, ի տարբերություն ՀՀ Սահմանադրության, միավորվելու իրավունքի սահմանափակման իրավաչափ նպատակ է նախատեսում սահմանադրական կարգի հիմունքները: ՌԴ Սահմանադրությունը, ի տարբերություն ՀՀ Սահմանադրության, չի նախատեսում միավորվելու իրավունքի սահմանափակման այնպիսի իրավաչափ նպատակներ, ինչպիսիք են հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման իրավաչափ նպատակները, սակայն այս իրավաչափ նպատակներն առկա են ՌԴ իրավական համակարգի մաս կազմող մարդու իրավունքների վերաբերող միջազգային փաստաթղթերում:

Այսպիսով՝ ՀՀ-ում և ՌԴ-ում միավորվելու իրավունքի սահմանափակման իրավաչափ նպատակներն են պետական անվտանգությունը, հասարակական կարգի պահպանությունը, անկարգությունների կամ հանցագործությունների կանխումը, այլոց առողջությունը կամ բարոյականությունը, կամ նրանց իրավունքներն ու ազատությունները: ՌԴ Սահմանադրությամբ նախատեսված առանձին իրավաչափ նպատակ է սահմանադրական կարգի հիմունքները:

(Շարունակությունը հաջորդ համարում)

RESUME

Mher Mamajanyan  
PH.D in Law  
Advisor to the Chairman of the Court of Cassation of RA

The grounds for restriction of the constitutional right to freedom of association

The article discusses the grounds for restriction of the constitutional right to freedom of association.

The author notes that as other fundamental rights the right to freedom of association is also subject to restrictions and limitations, and tries to examine the criteria of lawful and legitimate restrictions. For this purpose the author firstly tries to express his opinion regarding the restrictions of human rights in general, referring to the international documents as there is no universal approach regarding this issue in the theoretic literature. The author emphasizes the importance of the mechanisms and forms of setting out the restrictions of human rights in modern constitutions and in the light of the international best practice expresses his point of view regarding the way and form of establishment of constitutional norms guaranteeing the freedom of association.

<sup>17</sup> Տե՛ս Документ копенгагенского совещания Конференции по человеческому измерению СБСЕ 5-19 июля 1990г:

The author examines in details all the legitimate grounds for restriction of the constitutional right to freedom of association, noting that the restriction of the freedom of association will be compatible with the constitutions of the Republic of Armenia and the Russian Federation and their international obligations if: 1. the restriction is prescribed by law. 2. the restriction pursues one or more of the legitimate aims, set forth in Article 43 of the Constitution of RA, Article 55 of the Constitution of RF and the international documents on human rights 3. the restriction is necessary in a democratic society.

**Keywords:** freedom of associations, constitution, restriction of rights, prescribed by law, the quality of law, legitimate aim, necessary in democratic society, proportionality

РЕЗЮМЕ

Мгер Мамаджанян  
Кандидат юридических наук  
Советник председателя Кассационного суда РА

Основания ограничения конституционного права на объединение

Данная статья посвящена проблемам ограничения конституционного права на объединение. В статье автор отмечает, что в правовом государстве возможны ограничения права на объединение и делает попытку проанализировать основания ограничения права на объединение. С данной целью автор при помощи международных документов представляет свою точку зрения о понятии “ограничение прав” в целом, а также подчеркивает особую важность формы закрепления в конституциях ограничений основных прав человека, и специально обращается к международной практике закрепления ограничений основных прав в современных конституциях и в свете международной практики представляет свое мнение о том, как должны быть установлены нормы, регулирующие право на объединение в Конституциях РФ и РА.

Автор в статье детально рассматривает также и основания ограничения права на объединение, отмечая, что ограничение права на объединение будет соответствовать конституциям и международным обязательствам РФ и РА, если

1. ограничение установлено законом
2. ограничение преследует правомерную цель, предусмотренную ст. 43 Конституции РА и ст. 55 Конституции РФ, а также международными документами о правах человека
3. ограничение необходимо в демократическом обществе.

**Ключевые слова:** право на объединение, конституция, ограничение прав, предусмотренный законом, качество закона, законная (правомерная) цель, необходимо в демократическом обществе, пропорциональность

# ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽԱՐՏԻԱՅԻ ԴԵՐԸ ՆԱՅԱՏԱՆԻ ՆԱԵՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

## Հրաչուհի ՍԱՐԳՍՅԱՆ

իրավաբան

Հասարակական կյանքի տարբեր ոլորտներում ներդաշնակություն ապահովել հնարավոր չէ միայն ներպետական օրենքներով: Այդ է պատճառը, որ բոլոր պետությունները, այդ թվում և Հայաստանը, ձգտում են հնարավորին շատ անդամակցել միջազգային պայմանագրերին ու համաձայնագրերին: ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքին ու նորմերին համապատասխան: Նշված սահմանադրական դրույթը նշանակում է, որ Հայաստանը պարտավոր է բարեխղճորեն կատարել միջազգային իրավունքի սկզբունքներից ու նորմերից բխող պարտավորությունները, այդ թվում՝ միջազգային պայմանագրային պարտավորությունները: Հայաստանը ներգրավվեց միջազգային գլոբալ գործընթացի մեջ, ինչն էլ արտացոլվում է մեր երկրի պոզիտիվ օրենքներում. համագործակցելով և անդամակցելով միջազգային ու տարածաշրջանային կազմակերպություններին և, հետևաբար, վավերացնելով միջազգային մի շարք փաստաթղթեր՝ զարգանում և կատարելագործվում է ՀՀ իրավական համակարգը: Հայաստանի անդամակցությունը Եվրոպայի խորհրդին անխուսափելի դարձրեց Եվրոպական օրենսդրության տարածումը ՀՀ իրավական համակարգի վրա: Հայաստանը, հանձն առնելով բավարարել անհատների հասարակական և տնտեսական վիճակը,

2004թ. հունվարին վավերացրեց Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիան (այսուհետ՝ «խարտիա»), որը Հայաստանում ուժի մեջ է մտել 2004թ. մարտի 1-ին:

Խարտիան հռչակում է դրույթներ, որոնք արդեն իսկ ամրագրված են բազմաթիվ արևմտաեվրոպական երկրների ազգային օրենսդրություններում, և դրա խնդիրներից մեկն էլ սոցիալտնտեսական ոլորտում միջազգային համընդհանուր վերահսկողական մեխանիզմի ստեղծումն է ԵՄ անդամ պետություններում<sup>1</sup>: Խարտիան կարգավորում է սոցիալտնտեսական և աշխատանքային, հասարակական ու կրթական ոլորտի առանցքային հարցերը, որոնց ապահովումը յուրաքանչյուր պետության բարեկեցության ու առաջընթացի գրավականն է: Ներկայումս Հայաստանը գտնվում է իրավական և սոցիալական պետության կայացման ու հաստատման գործընթացում, ուստի նշված խնդիրների արդյունավետ իրականացման ուղղությամբ համապատասխան մեխանիզմների մշակումը տվյալ ոլորտում մեր երկրի գերակա նպատակներից մեկն է:

Ըստ Խարտիայի՝ «Յուրաքանչյուր Կողմ, ազգային պայմաններին համապատասխան, պետք է ունենա աշխատանքային վերահսկողության համակարգ, իսկ Խարտիայում առկա իրավական պարտավորությունների կատարումը պետք է

<sup>1</sup> St' u Evropejskaya Sotsialnaya Hartiya: Spravochnik: Per. s fr. M.: Международные отношения, 2000., էջ 16:

ենթարկվի նույն վերահսկողությանը»<sup>2</sup>: Աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում պետության կողմից վարվող քաղաքականությունը պետք է ուղղված լինի ազգային օրենսդրության կատարելագործմանը՝ միջազգային չափանիշներին համապատասխան: Այս առումով, միջազգային մի շարք հիմնարար փաստաթղթերի վավերացմամբ, Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է պարտավորություններ՝ օրենսդրության, ինչպես նաև պետության կողմից սահմանվող երաշխիքների կատարելագործման հարցում ապահովելու կանոնակարգվածություն և կազմակերպարարական երաշխավորվածություն պետության իրավական համակարգում:

Խարտիան առավելապես կենտրոնացնում է աշխատանքային իրավունքների և դրանց իրավական պաշտպանության վրա: Աշխատանքը մարդու արժանավայել կյանքի միակ և անփոխարինելի պայմանն է, միաժամանակ նրա իրավունքն ու պարտականությունը: Մարդու գոյատևելու անհրաժեշտ պայմանները ապահովվում են աշխատանքի միջոցով՝ մարդու աշխատուժի, գիտելիքների և ունակությունների վաճառքի արդյունքում, որի շնորհիվ հնարավոր է լինում վաստակել գումար՝ գոյատևման անհրաժեշտ միջոցներ ձեռք բերելու համար: Աշխատանքը մարդու կյանքի գոյատևման հիմնական աղբյուրներից մեկն է: Այդ պատճառով էլ մարդու իրավունքների վերաբերյալ բոլոր փաստաթղթերում աշխատանքի իրավունքը ամրագրվում է որպես մարդու բնական և անօտարելի իրավունք<sup>3</sup>: Այս դրույթն իր ամրագրումն է ստացել Աշխատանքի միջազգային կազմակերպության ներածության մեջ, որտեղ ասված է. «Աշխատանքի պայմանները, որոնք հիմնված են անարդարության, մեծ թվով մարդկանց կարիքի և զրկանքների վրա, ծնունդ են այնպիսի խառնաշփոթ, որը վտանգի է ենթարկում խաղաղությունն ու ներդաշնակությունը աշխարհում»:

Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան, թերևս, այն միջազգային փաստաթղթերից մեկն է, որն առավելապես նվիրված է հենց աշխատողների աշխատանքային իրավունքների պաշտպանությանը: Խարտիան կարգավորում է ինչպես անհատական, այնպես էլ կոլեկտիվ աշխատանքային իրավունքները:

Մարդու և քաղաքացու աշխատանքային իրավունքները նույնպես գտնվում են միջազգային իրավական պաշտպանության ներքո: Աշխատանքային իրավունքի միջազգային աղբյուրների շարքում կարևոր տեղ են գրավում Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1948թ. դեկտեմբերի 10-ի 217 Ա III բանաձևով), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիրը (ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1966թ. դեկտեմբերի 16-ի 2200 Ա XXI բանաձևով) և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը: Աշխատանքի ոլորտում ՀՀ միջազգային պայմանագրերը նորմատիվ իրավական ակտեր են, որոնք կարգավորում են քաղաքացիների (օտարերկրացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և փախստականների) վարձու աշխատանքի կազմակերպման, կիրառման և պաշտպանության կապակցությամբ Հայաստանի և օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների և միջազգային հանրային իրավունքի մյուս սուբյեկտների միջև առաջացող հարաբերությունները<sup>4</sup>:

Աշխատանքային իրավունքների ապահովումը և իրականացումը պարտադիր է բոլոր այն պետությունների համար, որոնք վավերացրել են խարտիան և պարտավոր են կատարել իրենց կողմից ստանձնած համապատասխան պարտավորությունները: Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորությունների մեծ

<sup>2</sup> ԵՄԽ, Տեղեկատվական ժողովածու, Council of Europe European Commission, Երևան, 2003:  
<sup>3</sup> Տե՛ս Վ.Այվազյան, Մարդու իրավունքներ և ազատություններ: Ուս. ձեռնարկ.- Եր., 2007, էջ 169-170 :  
<sup>4</sup> Տե՛ս Գ.Վ.Պետրոսյան, Հայաստանի Հանրապետության աշխատանքային իրավունք: Ընդհանուր մաս / Երևանի պետ. համալս.- Եր.: ԵՊՀ հրատ., 2009, էջ 65:

մասը պայմանավորված է հենց աշխատողների անհատական աշխատանքային իրավունքներով: Խարտիայի 1-ին հոդվածը երաշխավորում է աշխատանքի իրավունքը:

Աշխատանքի իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով Խարտիան վավերացրած պետությունները՝ Կողմերը, պարտավորվում են՝

1. ընդունել, որպես իրենց հիմնական նպատակներից և պարտականություններից մեկը, աշխատանքի հնարավորին չափ բարձր և կայուն աստիճանի նվաճումը և պահպանումը՝ նպատակ ունենալով ձեռք բերել լիակատար զբաղվածություն,

2. պաշտպանել արդյունավետ կերպով իր ապրուստը վաստակելու աշխատողի իրավունքը նրա կողմից ազատորեն ընտրված ցանկացած աշխատանքով,

3. ստեղծել կամ պահպանել աշխատանքի ազատ տեղավորման ծառայություններ բոլոր աշխատողների համար,

4. օժանդակել կամ ապահովել համապատասխան մասնագիտական ուղղվածություն, ուսուցում և վերականգնում:

Աշխատանքը մարդու և՛ իրավունքն է, և՛ պարտականությունը: Այս իրավունքն իր ամրագրումն է ստացել ինչպես ՄԱԿ-ի Կանոնադրության, այսպես էլ շատ երկրների սահմանադրություններում<sup>5</sup>: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի հոդված 23-ը հստակորեն ամրագրում է այս իրավունքի ամբողջական պաշտպանություն ապահովող մեխանիզմ՝ սահմանելով. «Յուրաքանչյուր ոք աշխատանքի, աշխատանքի ազատ ընտրության, արդարացի ու նպաստավոր աշխատանքային պայմանների և

գործազրկությունից պաշտպանվելու իրավունք ունի»:

Աշխատանքի իրավունքը ոչ պակաս կարևոր իրավունք է, քան մարդու կյանքի իրավունքը, քանի որ, եթե չկա կյանք առանց գոյության միջոցների, ապա առանց աշխատանքի չեն կարող լինել գոյության միջոցներ<sup>6</sup>: Ավելին, աշխատանքի իրավունքի իրականացումը և աշխատանքի արդարացի պայմանները կարևոր նշանակություն ունեն հասարակական հարաբերությունների ներդաշնակության և սոցիալական խաղաղության ամրապնդման համար: ԳՅ Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը բնութագրվում է որպես սոցիալական պետություն, իսկ սոցիալական պետության բովանդակության հիմնական մասն է յուրաքանչյուր չափահաս քաղաքացու կողմից իր և իր ընտանիքի նվազագույն կենսապայմանները ապահովելու համար սեփական աշխատանքով միջոցներ վաստակելու հնարավորության ապահովումը: Նման հնարավորությունը կարող է առկա լինել ամենից առաջ աշխատանքի իրավունք ունենալու դեպքում:

Ընդունելով Խարտիայի 1.1 հոդվածը՝ պետությունները պարտավորվում են իրականացնել լիարժեք զբաղվածությանն ուղղված քաղաքականություն: Սա նշանակում է, որ մի կողմից պետությունները պետք է որդեգրեն և իրականացնեն այնպիսի տնտեսական քաղաքականություն, որը կհանգեցնի աշխատատեղերի ստեղծմանն ու պահպանմանը, և մյուս կողմից՝ նախաձեռնեն համարժեք միջոցառումներ՝ ուղղված գործազուրկ դարձած մարդկանց աշխատանքի տեղավորման և / կամ համապատասխան որակավորման հարցում աջակցելուն:

<sup>5</sup> Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությունն ամրագրում է սոցիալ-տնտեսական և աշխատանքային իրավունքների ապահովում երաշխավորող դրույթ, որի համաձայն ՄԱԿ-ը նպաստում է կենսամակարդակի բարձրացմանը, բնակչության լրիվ զբաղվածությանը և տնտեսական ու սոցիալական առաջընթացի ու զարգացման պայմաններին: Կազմակերպության բոլոր անդամները պարտավոր են նշված նպատակին հասնելու համար ձեռնարկել համատեղ ու ինքնուրույն գործողություններ՝ կազմակերպության հետ համագործակցելով (ՄԱԿ-ի Կանոնադրություն, հոդված 55, 56):

<sup>6</sup> Տե՛ս Գ.Վ.Պետրոսյան, Հայաստանի Հանրապետության աշխատանքային իրավունք: Ընդհանուր մաս / Երևանի պետ. համալս.- Եր.: ԵՊՀ հրատ., 2009, էջ 122-125 :

Խարտիայի 1.1 հոդվածը նախատեսում է պարտավորություն ավելի շատ միջոցների կիրառման առումով. լիարժեք զբաղվածությունը չապահովելը որպես այդպիսին չի հանգեցնում անհամապատասխանության մասին եզրակացության կայացմանը<sup>7</sup>: Այնուամենայնիվ, պետության ջանքերը պետք է լինեն համարժեք՝ ելնելով տնտեսական իրադրությունից և գործազրկության մակարդակից:

Պետության կողմից Խարտիայի վավերացումը միայն դեռ չի նշանակում, որ պետության իրավական համակարգը կամ իրականացվող քաղաքականությունը լիարժեքորեն համապատասխանում է միջազգային չափանիշներին. անհրաժեշտ է, որ պետությունն ապահովի ամրագրված դրույթների կենսագործումը, իսկ դա արդյունավետ չի կարող լինել առանց վերահսկողության: Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), որը որոշում է, թե արդյոք Խարտիայի կողմ հանդիսացող պետությունները համապատասխանում են Խարտիայի դրույթներին, կատարում է երկու տարբեր, բայց, միևնույն ժամանակ, փոխկապված հետևյալ երկու գործառնությունները՝ կատարում է Վերանայված եվրոպական սոցիալական Խարտիայի հետ ազգային իրավիճակների իրավական գնահատում, կայացնում է եզրակացություններ զեկույցների կազմման և ներկայացման ընթացակարգի շրջանակներում և ընդունում է որոշումներ ներկայացվող բոլորների կապակցությամբ: Խարտիան վավերացրած անդամ պետությունները ներկայացնում են ամենամյա հաշվետվություն օրենսդրության և գործնականում դրա պահանջների կատարման վերաբերյալ: Հաշվետվությունում արտացոլվում են միայն Խարտիայի վավերացրած հոդվածները: Կոմիտեն քննում է այդ հաշվետվությունը և որոշում կայացնում, թե տվյալ պետությունում որքանով և ինչպես են բավարարվել Խարտիայի պահանջները: Այդ որոշումները, որոնք կոչվում են «եզրակացություններ», ամեն տարի հրապարակվում են<sup>8</sup>:

Կոմիտեի գնահատականը Խարտիայի պահանջի պահպանման վերաբերյալ հիմնվում է մի շարք տնտեսական ու սոցիալական ցուցանիշների վրա, որոնք պայմանավորված են տնտեսական աճը զբաղվածության փոխակերպելու և գործազուրկ մարդկանց աջակցություն տրամադրելու խնդրում պետությունների նվաճած արդյունքներով: Նախևառաջ, Կոմիտեն քննության է առնում երկրի տնտեսական իրադրությանը վերաբերող բազմաթիվ ցուցանիշներ (օրինակ՝ ՀՆԱ-ի աճ, գնաճ, աշխատատեղերի ավելացում), զբաղվածության ցուցանիշներ (օրինակ՝ զբաղվածության մակարդակ, կես դրույքով և հաստատուն ժամերով զբաղվածություն), ինչպես նաև գործազրկության ցուցանիշներ, որտեղ հատուկ ուշադրություն է դարձվում խոցելի խմբերին, ինչպիսիք են երիտասարդությունը, տևական գործազուրկները, էթնիկական փոքրամասնությունները ու հաշմանդամները: Հիմնվելով այս տեղեկատվության վրա՝ Կոմիտեն ուսումնասիրում է իրականացվող քաղաքականությունը, որտեղ հաշվի է առնվում նաև պետության կողմից օրենքով կամ պաշտոնապես հայտարարված լիարժեք զբաղվածության հասնելու պարտավորվածությունը, ինչպես նաև գործնականում իրականացված միջոցառումների քանակը, զբաղվածության ուղղությամբ իրականացրած միջոցառումների շրջանակը (օրինակ՝ գործազուրկների ընդհանուր թվում միջոցառման մասնակիցների թվի հարաբերակցությունը, նախքան միջոցառմանը մասնակցելը գործազրկության միջին տևողությունը), տարբեր միջոցառումների իրականացման համար հատկացված ռեսուրսների քանակը (օրինակ՝ ՀՆԱ-ի ընդհանուր մասնաբաժինը, ակտիվ ու պասիվ միջոցառումների միջև տարբերությունը): Կոմիտեն ուսումնասիրում է նաև զբաղվածության քաղաքականության վերջնական արդյունքները, գլխավորապես, տարբեր ակտիվ միջոցառումների ազդեցությունը տևական զբաղվածության

<sup>7</sup> St' u Digest of the Case law of the European Committee of Social Rights /Սոցիալական իրավունքների եվրոպական հանձնաժողովի նախադեպային իրավունքի ամփոփագիր/, 2006, 1 september, էջ 39:

<sup>8</sup> St' u European Committee of Social Rights. Activity report 2011. May 2012, էջ 11-12 :



նվազեցման առումով (ուսուցում, ուղղորդում, սուբսիդավորվող աշխատանքներ և այլն):

Կոմիտեն հաշվի է առնում նաև պետական քաղաքականության վրա ազդող միջազգային տնտեսական միտումներից բխող սահմանափակումները և զբաղվածության դեմ արդյունավետ պայքարին առնչվող բարդությունները: Կոմիտեն նշում է, որ աշխատաշուկայում ձեռնարկվող միջոցառումները պետք է լինեն արդյունավետ, նպատակային և կանոնավոր պետք է վերահսկվեն<sup>9</sup>:

Պետությունը լրիվ զբաղվածության ապահովման քաղաքականության կայացման համար առաջնային նպատակ պետք է դիտի ակտիվ աշխատաշուկայի պահպանումը և զարգացումը<sup>10</sup>: Կոմիտեի ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել են իրադրություններ, որոնք չեն համապատասխանել Խարտիայի պահանջներին.

- երբ բացակայել է լիարժեք զբաղվածության ապահովման մասին պաշտոնական պարտավորվածությունը և զբաղվածությանը նպատակաուղղված քաղաքականու-

թյունը<sup>11</sup>,

- երբ զբաղվածության քաղաքականությունում, չնայած տնտեսական աճին, տեղի են ունեցել բացասական զարգացումներ գործազուրկների քանակի ակտիվացման առումով,

- երբ գործազրկությունը (հիմնականում երիտասարդների շրջանում առկա) եղել է չափազանց բարձր, որի դեպքում նախաձեռնված միջոցառումները անբավարար են (ակտիվ միջոցառումներին թվով քիչ մասնակցությունը)<sup>12</sup>:

Խարտիայի 1-ին հոդվածի 2-րդ կետը ընդգրկում է երեք տարբեր հարցեր.

1. զբաղվածության գործում խտրականության ցանկացած դրսևորումների արգելում,
2. հարկադիր աշխատանքի արգելում,
3. ազատ կամքով ընտրված մասնագիտությամբ ապրուստը վաստակելու

աշխատողի իրավունքը ոտնահարող ցանկացած գործելակերպի արգելում:

Խարտիայի 1-ին հոդվածի 2-րդ կետի

<sup>9</sup>Տե՛ս. European Committee of Social Rights, Conclusions 2012 - Norway - Article 1-1:

Կոմիտեն, ըստ Նորվեգիայի ներկայացրած զեկույցի, եզրակացրել է, որ զբաղվածության ապահովման ուղղված միջոցառումներին ներգրավված մասնակիցների թիվը գոհացնող է (Ձեկույցում նշվում էր, որ 2010թ. աշխատաշուկայի միջոցառումներին մասնակցել են 76,800 մարդ), և, չնայած ՀՆԱ-ի անկմանը, տվյալ հաշվետու ժամանակահատվածում Նորվեգիայի աշխատաշուկայում նվազել է գործազուրկների թիվը: Կոմիտեն եզրակացրել է, որ Նորվեգիայում տիրող իրավիճակը բավարարում է Խարտիայի հոդված 1-ի 1-ին կետի պահանջներին:

<sup>10</sup>Տե՛ս. OECD Social, Employment and Migration Working Papers, Activation Policies in Norway, 2 March 2009:

<sup>11</sup>Տե՛ս. European Committee of Social Rights, Conclusions XVI-1/ Netherlands/ Նիդեռլանդներ (Անտիլյան և Արուբիան Նիդեռլանդներ), Article 1-1: Ձեկույցի մեջ նշվում է, որ կառավարությունը նպատակ ունի հասնել լիարժեք զբաղվածության ճյուղային զարգացման քաղաքականության միջոցով՝ առաջնահերթությունը, մասնավորապես, տալով գրասաշրջության ճյուղի զարգացմանը: Նշվում է նաև, որ զբաղվածության քաղաքականության համար պատասխանատվություն են կրում կղզիների կառավարությունները: Այնուամենայնիվ նշվում է նաև, որ այդ նույն կառավարությունները հետամուտ չեն որոշակի զբաղվածության քաղաքականությանը, և որ այս նպատակի համար միջոցներ հատկացված չեն: Կոմիտեն համարում է, որ վերը նշված զբաղվածության իրավիճակի լույսի ներքո զբաղվածության ապահովման ուղղված քաղաքականության բացակայությունը անհամատեղելի է Խարտիայի հոդված 1-ի 1-ին կետի նպատակի հետ:

<sup>12</sup>Տե՛ս. European Committee of Social Rights, Conclusions 2004-1/Bulgaria /, Article 1-1: 1993-1996թթ. Բուլղարիայում ընդհանուր գործազրկության տեմպը 21.4%-ից նվազել է մինչև 14%: Այն փոփոխության չի ենթարկվել մինչև 1998թ., երբ կրկին սկսում է աճել: 2001թ. գործազրկության թիվը հասել է 19.6%-ի: 2002թ. Բուլղարիայի զբաղվածության գնահատումը ցույց է տվել, որ երկարատև գործազուրկների 50%-ը և երիտասարդ գործազուրկների 70%-ը կրթական ցածր մակարդակ են ունեցել: Կոմիտեն եզրակացրել է, որ աշխատուժի շուկայի գործող ծրագրերի վրա ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 0.35%-ը, ինչը եվրոպական ստանդարտների համեմատությամբ ցածր է գնահատվում: Ձեկույցի համաձայն՝ կազմակերպված ակտիվ միջոցառումներին 2001թ. մասնակիցների թիվը կազմել է 107,000 մարդ (գործազուրկների թիվը այդ տարի կազմել է 684,000 մարդ): Կոմիտեն նշում է, որ մասնակցության մակարդակը սահմանափակ է: Կոմիտեն եզրահանգել է, որ իրավիճակը Բուլղարիայում չի համապատասխանում Խարտիայի հոդված 1-ի 1-ին կետի պահանջներին ընդհանուր և երկարատև գործազրկության բարձր տեմպի, ակտիվ միջոցառումների ոչ լիարժեք ֆինանսավորման պատճառով:

համաձայն՝ օրենսդրությունը պետք է արգելի սեռի, ռասայի, էթնիկական պատկանելիության, կրոնի, հաշմանդամության, տարիքի, սեռական կողմնորոշման և քաղաքական նկատառումների հիման վրա աշխատավայրում խտրականության ցանկացած դրսևորում: Խտրականության արգելքը պետք է ունենա իրավական ուժ: Այն պետք է առնվազն նախատեսի.

- աշխատանքային հավաքական համաձայնագրերում, աշխատանքային պայմանագրերում կամ կազմակերպության ներքին իրավական ակտերում սահմանվող և հավասար վերաբերմունքի սկզբունքին հակասող ցանկացած դրույթի՝ բացառելու, չեղյալ համարելու, փոփոխելու կամ մերժելու իրավասություն,
- բողոք ներկայացրած կամ օրինական գործողություն նախաձեռնած անձին աշխատանքից ազատման կամ գործատուի այլ հակընդդեմ գործողություններից պաշտպանվածություն,
- խտրականության դրսևորման դեպքի պարագայում համապատասխան արդյունավետ ուղղիչ միջոցառումների կիրառման համակարգի առկայություն:

Այս դրույթը պայմանավորված է Խարտիայի այլ դրույթներով, մասնավորապես, հողված 20-ի (սեռական պատկանելիության հիման վրա առանց խտրականության աշխատանքային և մասնագիտական գործունեության մեջ հավասար վերաբերմունքի իրավունքը) և հողված 15-ի 2-րդ կետով (հաշմանդամների աշխատանքի իրավունքը)<sup>13</sup>: Խտրական գործողություններ կարող են ի հայտ գալ աշխատանքի ընդունման կամ ընդհանուր առմամբ աշխատանքային պայմանների (մասնավորապես, վարձատրության, ուսուցման, աշխատանքային առաջխաղացման, մեկ աշխատանքից մյուսին անցնելու,

աշխատանքից ազատման) կապակցությամբ:

Խարտիայով ամրագրված քննարկվող դրույթին համապատասխանելու համար պետությունները պետք է իրավական միջոցներ ձեռնարկեն խտրականության արգելման արդյունավետությունն ապահովելու նպատակով<sup>14</sup>:

Խարտիայի վերոնշյալ հողվածի ապահովման տեսանկյունից մեր աշխատանքային օրենսգրքով ևս ամրագրված են աշխատողների իրավունքների պաշտպանությանն ուղղված սկզբունքներ, այն է՝ ցանկացած ձևի (բնույթի) հարկադիր աշխատանքի և աշխատողների նկատմամբ բռնությունների արգելումը, ինչպես նաև աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավահավասարությունը՝ անկախ նրանց սեռից, ռասայից, ազգությունից, լեզվից, ծագումից, քաղաքացիությունից, սոցիալական դրությունից, դավանանքից, ամուսնական վիճակից և ընտանեկան դրությունից, տարիքից, համոզմունքներից կամ տեսակետներից, կուսակցություններից, արհեստակցական միություններից կամ հասարակական կազմակերպություններից անդամակցելուց, աշխատողի գործնական հատկանիշներին չառնչվող այլ հանգամանքներից: Մեր կողմից ներկայացվող զեկույցներում ևս մշվում է, որ այս առումով ՀՀ օրենսդրությունը համապատասխանում է միջազգային չափանիշներին: Սակայն հարկ ենք համարում քննարկվող դրույթի շրջանակներում անդրադառնալ նաև հետևյալ հարցին: Այսպես, ՀՀ Սահմանադրության 32-րդ հողվածը հռչակում է, որ յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ընտրության ազատության իրավունք: Այս ձևակերպման և Խարտիայի վերոնշյալ հողվածի բովանդակությունների մեկնաբանություններից հստակ երևում է, որ խարտիայում ամրագրվում

<sup>13</sup> Խարտիայի պահանջն է, որ պետությունները խթանեն աշխատուժի բաց շուկայում հաշմանդամներին աշխատանքի տեղավորելու հնարավորությունը նրանց կարիքներին աշխատանքային պայմանները համապատասխանեցնելու միջոցով: ՀՀ վարչապետի 2008 թվականի փետրվարի 25-ի թիվ 98-Ն որոշմամբ ստեղծվել է Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով): Հանձնաժողովը խորհրդակցական մարմին է, որի գործունեության նպատակը հաշմանդամություն ունեցող անձանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանն աջակցելն է:

<sup>14</sup> St' u European Committee of Social Rights, Conclusions 2004-1/Austria/, Article 1-2:

է աշխատանքի իրավունք, իսկ մեր օրենքում ամրագրված է աշխատանքի ընտրության ազատության իրավունք: Դրա համար անհրաժեշտ է իմանալ, թե ինչ է նշանակում աշխատանքի իրավունք, և ինչ է նշանակում աշխատանքի ընտրության ազատության իրավունք: Աշխատանքի իրավունքը նշանակում է, որ պետությունը պարտավոր է անձին, քաղաքացուն ապահովել իր մասնագիտական որակին, կրթությանը համապատասխան աշխատանքով: Իսկ աշխատանքի ազատությունը նշանակում է, որ յուրաքանչյուր ոք ազատորեն ընտրում է իր մասնագիտությունը և զբաղմունքի տեսակը: Ճիշտ է, Սահմանադրության դրույթը լիրաժեք ապահովում է աշխատանքի ազատությունը, սակայն կասկածի տակ է դնում սոցիալական պետության հիմնական պահանջը, որի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իր աշխատանքի միջոցով ստացված եկամուտով պետք է բավարարի իր ընտանիքի կարիքները: Գրականության մեջ սոցիալական պետության նման «վարքագիծը» փորձում են կապել օբյեկտիվորեն պայմանավորված պետության դերի փոփոխության հետ այն առումով, որ վերջինս դադարել է արտադրության բոլոր միջոցների միակ սեփականատերը լինելուց, հետևաբար, առաջվա նման միակ գործատուն չէ, որն ապահովում է յուրաքանչյուրի համար երաշխավորված աշխատանք<sup>15</sup>: Այս կապակցությամբ Գ.Վ. Պետրոսյանի «ՀՀ աշխատանքային իրավունք» դասագրքում ներկայացվել է տեսակետ, համաձայն որի՝ աշխատանքային իրավունքի սահմանադրական ձևակերպումը հաջողված չէ: «Աշխատանքի ընտրության ազատության» արտահայտության փոխարեն ճիշտ կլիներ նշել «զբաղվածության ազատության իրավունք» արտահայտությունը<sup>16</sup>: Այս տեսակետը պնդում ենք նաև մենք: Բացի այդ, մեր կարծիքով, ճիշտ կլիներ, որի երկրի հիմնա-

կան օրենքը, քաղաքացիների «զբաղվածության ազատության և երաշխավորված աշխատանքի» իրավունքը սահմանելուց բացի, առանձին ամրագրեր այդ իրավունքի բովանդակությունը կազմող տարրեր: Բանն այն է, որ «աշխատանքի ընտրության ազատության» արտահայտության մեկնաբանության սահմանադրական դրույթի բացակայությունն աշխատանքային օրենսդրության կիրառման պրակտիկայում երբեմն օրենսդրության իրարամերժ մեկնաբանությունների և կիրառման պատճառ է<sup>17</sup>:

Խարտիայի 1-ին հոդվածի 3-րդ կետը երաշխավորում է աշխատանքի տեղավորման անվճար ծառայություններ ստանալու իրավունք երկրի ողջ տարածքում և տնտեսության բոլոր բնագավառներում: Նշված ծառայությունների հիմնական գործառույթը պետք է լինի աշխատանք որոնողներին, ինչպես նաև ներկա աշխատանքը փոխել ցանկացողներին աշխատանքի տեղավորելը: Աշխատանքի տեղավորման անվճար ծառայությունների արդյունավետության գնահատման համար կիրառվող քանակական ցուցանիշները գործնականում ներառում են տեղաբաշխման ցուցանիշը (այսինքն՝ աշխատանքի տեղավորման ծառայությունների կողմից աշխատանքի տեղավորման դեպքերի մասնաբաժինը հայտարարված թափուր տեղերում) և հանրային ու մասնավոր ծառայությունների համապատասխան մասնաբաժինները շուկայում: Շուկայի մասնաբաժինը չափվում է որպես աշխատուժի շուկայում աշխատանքի տեղավորման ընդհանուր թվում աշխատանքի տեղավորման դեպքերի տոկոսային հարաբերություն: Ի վերջո, արհեստակցական միությունները և գործատուների կազմակերպությունները պետք է մասնակցեն աշխատանքի տեղավորման ծառայությունների կազմակերպման

<sup>15</sup> Տե՛ս Կոզլովա, Օ.Է. Կутафин, Конституционное право России. М., 1995, էջ 219:

<sup>16</sup> Տե՛ս Գ.Վ. Պետրոսյան, ՀՀ աշխատանքային իրավունք, Ընդհանուր մաս/ Երևանի պետ. Համալս.-Եր., ԵՊՀ հրատ., 2009, էջ 14:

<sup>17</sup> Տե՛ս Գ.Վ. Պետրոսյան, ՀՀ աշխատանքային իրավունք, Ընդհանուր մաս/ Երևանի պետ. Համալս.-Եր., ԵՊՀ հրատ., 2009, էջ 61:

և իրականացման աշխատանքներին<sup>18</sup>: Ներկայումս Հայաստանում ևս գործում են աշխատանքի տեղավորման բազմաթիվ գործակալություններ, որոնք, ինչպես ցույց են տալիս մեր ուսումնասիրությունները, գործնականում իրենց չեն արդարացնում: Աշխատանքի տեղավորման ծառայությունների մատուցումը զարգացած է շատ եվրոպական երկրներում, և աշխատանք փնտրողները հենց այդ ճանապարհով են անցնում աշխատանքի: Մեր հանրապետությունում, ըստ էության, աշխատանք փնտրողը գրթե միշտ ինքնուրույն է իրականացնում ազատ աշխատատեղ գտնելու գործընթացը: Սա, թերևս, բացատրվում է նրանով, որ ի տարբերություն մյուս եվրոպական երկրների՝ Հայաստանում աշխատաշուկան փոքր է, և աշխատողների պահանջարկը քիչ է:

**Խարտիայում ամրագրված աշխատանքի իրավունքը, որը ստանձնել է իրականացնել Հայաստանը, կարծում ենք, ներկայիս պայմաններում լիարժեքորեն ապահովված չէ, քանի որ, գաղտնիք չէ, որ մեր պետության ամենախոցելի կողմերից մեկը հենց համապատասխան աշխատանքով ապահովված չլինելն է, ինչը պայմանավորված է սակավ աշխատատեղերի, մասնավորապես՝ գործատուների, ձեռնարկությունների՝ մասնավոր անձանց ձեռքում կենտրոնացած լինելու հանգամանքով:**

Խարտիայի 1-ին հոդվածի 4-րդ կետը երաշխավորում է աշխատող և գործազուրկ մարդկանց մասնագիտական ուղղորդման, շարունակական մասնագիտական ուսուցման իրավունքը: Պետությունները պետք է առնվազն ապահովեն այդ ծառայությունների առկայու-

թյունը և դրանցից օգտվելու հնարավորությունը, Խարտիայի կողմ հանդիսացող այլ պետությունների քաղաքացիների և հաշմանդամների նկատմամբ հավասար վերաբերմունքը: Խարտիայի 1-ին հոդվածի 4-րդ կետը լրացնում է 9-րդ հոդվածը (մասնագիտական ուղղորդման իրավունքը), 10-րդ հոդվածի 3-րդ կետը (շարունակական մասնագիտական ուսուցում ստանալու չափահաս աշխատողների իրավունքը), 15-րդ հոդվածի 1-ին կետը (ուղղորդում, կրթություն և մասնագիտական ուսուցում ստանալու հաշմանդամների իրավունքը), որոնք նախատեսում են մասնագիտական ուղղորդման և մասնագիտական ուսուցման առանձնակի իրավունքները<sup>19</sup>:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել առանցքային նշանակություն ունեցող այն շեշտադրմանը, որը աշխատող անձը պետք է ունենա շարունակական մասնագիտական ուսուցման իրավունք: Այս ինստիտուտը, մեր հանրապետությունում, թերևս, բավականին բացեր ունի: Քաղաքակիրթ պետությունները հսկայական միջոցներ են ներդնում կրթության ուղղությամբ՝ գիտակցելով, որ այդ միջոցները ապագայում կվերադարձվեն հասարակությանը՝ գիտական հայտնագործությունների, մշակութային արժեքների, որակյալ աշխատուժի և այլնի ձևերով: Չափահաս աշխատողների համար համապատասխան և բավականին շարունակական մատչելի ուսման հնարավորությունների ապահովումը կարևոր նշանակություն ունի, որը, կարծում ենք, Հայաստանում դեռևս չլուծված խնդիրների շարքին է դասվում, քանի որ չկան այն համապատասխան միջոցները, որոնք հնարավորություն կտան քաղաքացուն և՛ աշխատել, և՛ կատարելագործել

<sup>18</sup> St´u European Committee of Social Rights, Conclusions XV-1/Poland /, Article 1-3: Իր եզրակացության մեջ Կոմիտեն նշում է. «Գործատուների կազմակերպությունները, արհմիությունները և տարածաշրջանային մարմինները ակտիվորեն ներգրավված են զբաղվածության քաղաքականության ընդհանուր ձևակերպման և զբաղվածության գրասենյակների ստեղծման նպատակների որոշման հարցերում: Կողմերի միջև երկխոսությունը տեղի է ունենում Զբաղվածության խորհուրդների շրջանակներում, որոնք կազմակերպվել են կենտրոնական, տարածաշրջանային և շրջանային մակարդակներում: Նրանց դերը լրիվ զբաղվածության ապահովմանը ուղղված միջոցառումների կազմակերպումն է: Տրված տեղեկությունների հիման վրա Կոմիտեն եզրակացնում է, որ Լեհաստանում իրավիճակը համապատասխանում է Խարտիայի 1-ին հոդվածի 3-րդ կետի դրույթներին»:

<sup>19</sup> Եթե պետությունը չի վավերացրել հոդվածներ 9-ը, 10-ը կամ 15-ը, ապա Կոմիտեն գնահատում է իրադրությունը հոդված 1-ի 4-րդ կետի տեսանկյունից:

իր մասնագիտական գիտելիքները լրացուցիչ ուսուցման, դասընթացների միջոցով: Այս առումով անհրաժեշտ է ձեռնարկել խթան հանդիսացող միջոցներ, մասնավորապես՝ զարգացնել վերապատրաստման և աշխատանքին զուգահեռ մասնագիտական ուսուցման ինստիտուտները, որպեսզի աշխատողը անընդհատ կամ գոնե պարբերաբար անցնի մասնագիտական դասընթացներ, ինչն էլ բնականաբար կհանգեցնի աշխատանքի որակի բարձրացմանն ու տեսական և պրակտիկ գիտելիքների լավագույն համադրմանը:

Այսպիսով, Խարտիայի 1-ին հոդվածի պահանջն է առանց որևէ խտրականության ապահովել ազատ կանքով ընտրված մասնագիտությամբ ապրուստը վաստակելու աշխատողի լիակատար զբաղվածությունը: Աշխատանքի ազատ ընտրության իրավունքը ամենևին էլ չի նշանակում, որ պետությունը ոչ մի պարտականություն չի կրում բնակչության աշխատանքի իրավունքի իրականացման գործում: Գր աշխատանքային օրենսգրքի սկզբունքներից առաջինը նույնպես վերաբերում է աշխատանքի ազատությանը, ներառյալ՝ աշխատանքի իրավունքը (որը յուրաքանչյուրն ազատորեն ընտրում է կամ որին ազատորեն համաձայնում է), աշխատանքային ունակությունները տնօ-

րինելու, մասնագիտության և գործունեության տեսակի ընտրության իրավունքը: Խարտիայում ամրագրված աշխատանքի իրավունքը, որը ստանձնել է իրականացնել Հայաստանը, կարծում ենք, ներկայիս պայմաններում լիարժեքորեն ապահովված չէ, քանի որ գաղտնիք չէ՝ մեր պետության ամենախոցելի կողմերից մեկը հենց մարդու՝ համապատասխան աշխատանքով ապահովված չլինելն է: Նման պայմաններում գործազուրկների թիվը շատանում է, ինչի հետևանքով տեղի է ունենում հասարակական վիճակի և կենսամակարդակի աստիճանական անկում, և, որքան էլ ցավալի է, ավելանում է արտագաղթողների քանակը:

*Մեր կարծիքով, աշխատանքի իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է արդարացի ու բարեխիղճ մրցակցության հիման վրա հատկապես մասնագիտացմանը համապատասխան աշխատանքի տեղավորման ու կայուն աշխատանքային պայմանների ստեղծման միջոցով կազմակերպել հստակ ու ակտիվ միջոցառումներ աշխատատեղերի ավելացման ուղղությամբ և աշխատանքային ռեսուրսների ճիշտ օգտագործման միջոցով նպաստել աշխատանքային շուկայի արդյունավետ զարգացմանը:*

**Բանալի բաներ**՝ աշխատանքի իրավունք, լիակատար զբաղվածություն, Խարտիա, խտրականություն, աշխատանքային պայմաններ, աշխատաշուկա

**Ключевые слова:** трудовые права, полная занятость, Хартия, дискриминация, условия труда, трудовой рынок

Роль Европейской социальной хартии (пересмотренной)

в защите трудовых прав работников Республики Армения

В данной работе представлены вопросы, связанные с соблюдением требований, определенных Европейской социальной хартией (пересмотренной) в целях защиты трудовых прав работников. Европейская социальная хартия (пересмотренная) является, возможно, одним из тех международных документов, который в наибольшей степени посвящен защите трудовых прав. Хартия регулирует как индивидуальные, так и коллективные трудовые права. В работе представлены механизмы защиты права работников зарабатывать себе на жизнь с помощью выбранной ими без всякой дискриминации и на основе свободного выбора профессии и права на обеспечение его полной занятости. Затем в работе представлены принципы защиты прав работников в целях эффективного осуществления запрета на проявление любой дискриминации на рабочем месте, а также содержится обращение к вопросу наличия и соблюдения системы применения соответствующих

эффективных исправительных мер в случае проявления дискриминации. Обсуждаются вопросы, связанные с гарантией прав работников и безработных на получение бесплатных услуг по трудоустройству на всей территории страны и во всех отраслях экономики, а также права на профессиональную ориентацию и непрерывное профессиональное обучение. The Role of the Revised European Social Charter in the Defense of the Employees' Working Rights in the Republic of Armenia

Key words: right to work, full-time occupation, Charter, discrimination, working conditions, work market.

The present paper deals with the questions of saving the demands of the employees' working rights defined by the Revised European Social Charter. The Revised European Social Charter is perhaps one of the international documents mainly devoted to the defense of employees' working rights. The charter regulates both individual and collective working rights. In the paper the mechanism for earning the living by voluntarily chosen profession without any discrimination and the mechanism of defending the rights for providing the employee's full-time work are represented. Afterwards, the principles directed to the protection of employees' rights at their workplace for providing the efficiency of forbidding any act of discrimination are represented, also the existence and maintenance of the system of corresponding effective corrective means applicable in the case of discrimination are revealed. The questions of getting free consultation services for getting work and the professional instructions for directing employed and unemployed people, as well as warranting their rights to develop their professional skills constantly on the whole territory of the country and in all the spheres of the economy have been considered.

---

# ՆԱՅԱՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՏԱՆԻ ԴՆԵՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԴԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԱՆԱՎԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՆԱՄԱՁԱՅՆ

## Եկատերիևա ԺԻՐԵՆԿՈ

Քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցորդ

Խորհրդային Միության փլուզումից հետո Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության փոխհարաբերությունները կառուցվում են անկախ, ինքնիշխան պետությունների դիրքերից, որոնք հանդիսանում են միջազգային գործընթացների առանձին ինքնուրույն դերակատարներ: Չնայած դրան, դաշնակցային կոչվող և որպես ռազմավարական գործընկերություն ձևակերպված այս փոխհարաբերությունների բնույթը շարունակում է մնալ պատմական, մշակութային, հոգևոր միության այն ամուր հիմքի վրա, որը բոլոր ժամանակներում կարևորագույն դեր է խաղացել կողմերի փոխգործակցության գործում: Զանազան միջազգային հարցերի շուրջ հետաքրքրությունների ընդհանրությունը, օրինակ՝ անվտանգության, քաղաքական և տնտեսական համագործակցության ոլորտներում, խթանել է այս պետությունների ինտեգրացմանը համաշխարհային և տարածաշրջանային մասշտաբի տարբեր քաղաքական, տնտեսական, ռազմական և այլ միություններին, ինչպես նաև ժամանակակից աշխարհում զարգացման և փոխգործակցության ընդհանուր սկզբունքների մշակմանը: Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև ստեղծված է անհրաժեշտ իրավական բազա ամենաընդարձակ համագործակցության համար, տարբեր ոլորտներում կնքվել են հսկայական քանակության միջազգային պայմանագրեր և համաձայնագրեր:

Հատկապես ակտուալ է դառնում ռազմա-քաղաքական համագործակցության ոլորտը, որում

կողմերը նշանակալի պարտավորություններ են կրում (կապված անվտանգության պահպանման և ռազմական օգնություն տրամադրելու հետ<sup>1</sup>), որոնց իրականացումից շատ դեպքերում կախված է խաղաղության և կայունության պահպանումը Անդրկովկասի տարածաշրջանում:

Այժմյան փուլում կարելի է ասել, որ պարտավորությունների կատարման գործընթացը տեղափոխվել է պաշտոնական հարթություն՝ կանոնակարգման իրավական ոլորտ: Միջազգային իրավունքում տվյալ խնդրի լուծման մեջ հատուկ ուշադրություն են դարձնում *Pacta sunt servanda* համընդհանուր, իրամայական սկզբունքին՝ «ստանձնած պարտավորությունների բարեխիղճ կատարում»: Այդուհանդերձ, իրավագետներն իրենք էլ խոստովանում են, որ իրական իրավիճակներում խնդիրներ են առաջանում ոչ միայն «բարեխիղճություն» հասկացության (որպես ոչ իրավական երևույթ), այլ նաև՝ նրա ճշգրիտ իրավաբանական բովանդակության սահմանման հետ կապված:

Դեռ ավելին, պարտավորությունների կատարման առաջարկվող իրավական մեխանիզմները, ինչպիսիք են որոշումների իրականացման նկատմամբ հսկողություն իրականացնող հատուկ մարմինների ստեղծումն ու գործունեությունը կամ վեճը միջազգային դատական ատյանում դիտարկելու հնարավորությունը<sup>2</sup>, որոնք կիրառվում են Հայաստանի Հանրապե-

<sup>1</sup> Տե՛ս օրինակ, Договор о дружбе, сотрудничестве и взаимной помощи между Российской Федерацией и Республикой Армения 1997г. Электронный ресурс: [http://www.lawrussia.ru/texts/legal\\_555/doc555a808x659.htm](http://www.lawrussia.ru/texts/legal_555/doc555a808x659.htm); Протокол № 5 между Российской Федерацией и Республикой Армения о внесении изменений в Договор между Российской Федерацией и Республикой Армения о российской военной базе на территории Республики Армения от 16 марта 1995г. Электронный ресурс: <http://www.kavkaz-uzel.ru/articles/173310/> и др.

<sup>2</sup> Տե՛ս ըստ: Л.М.Чуркина «Роль принципа добросовестного выполнения международных обязательств в процессе контроля их соблюдения» // Журнал «Современное право», №7, 2010; Электронный ресурс: <http://sutyajnik.ru/articles/381.html>



տության և Ռուսաստանի Դաշնության միջև ռազմաքաղաքական համագործակցության ոլորտում պարտավորությունների կատարման նկատմամբ, քիչ արդյունավետ են թվում: Այսպես, հավասարապես կարելի է խոսել միջազգային դատական մարմիններին դիմելու կասկածելի հնարավորության մասին, օրինակ, ռազմական օգնություն տրամադրելու պարտավորությունը չկատարելու դեպքում, նման օգնություն ցուցաբերելու քիչ հավանական դրոշման մասին, ինչպես նաև այդ չկատարելու դեպքում առաջացած պատասխանատվության մասին՝ դրա բացասական իմաստով (այս կամ այն իրավական սանկցիաների տեսքով): Բուն պայմանագրերում ստանձնած պարտավորությունների կատարման արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումները հանգում են խորհրդատվական մարմինների (խառը հանձնաժողովների) ստեղծմանը<sup>3</sup>:

Ինչպես իրավական, այնպես էլ հատկապես ոչ իրավական (պատմական, մշակութային, հոգևոր և այլ) հիմքի առկայությունը հայ-ռուսական հարաբերություններում իր հետքն է թողնում նաև կողմերի փոխադարձ պարտավորությունների կատարման վրա: Այս կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում ըստ ռուս-հայկական պայմանագրերի ռազմաքաղաքական համագործակցության ոլորտում պարտավորությունների կատարման ընթացքի դիտարկումը սուբյեկտիվ-օբյեկտիվային կապերի համալիր տեսքով, ինչը հնարավոր է Քեն Ուիլբերի մշակած ինտեգրալային մոտեցման կիրառման շնորհիվ<sup>4</sup>:

Ինտեգրալային մոտեցման դիրքորոշումից ցանկացած երևույթ հետազոտվում է սուբյեկտիվ և օբյեկտիվ, անհատական և կոլեկտիվ, ներքին և արտաքին կողմերից, այնպիսի հասկացությունների միջոցով, ինչպիսիք են՝ «սուբյեկտիվ Ես-ը», «օբյեկտիվ Ես-ը», «օբյեկտիվ Մենք-ը» և «սուբյեկտիվ Մենք-ը»: Դրա հետ մեկտեղ ամենաընդհանուր իմաստով այս հասկացությունների տակ դիտ-

վում է հետևյալը. էական բովանդակությունը, գիտակցությունը, կոնկրետ սուբյեկտի մտադրությունը («սուբյեկտիվ Ես-ը»), նրա արտաքին կողմը, ձևը, վարքը («օբյեկտիվ Ես-ը»), ցուցաբերած գործողությունը, գործունեությունը, ֆունկցիոնալ համակարգը, սոցիալական ոլորտը («օբյեկտիվ Մենք-ը»), չցուցաբերված փոխհարաբերությունը, գիտակցությունների փոխհարաբերությունը, մշակութային ոլորտը («սուբյեկտիվ Մենք-ը»): Բոլոր ոլորտների միջև դիտարկվում է ամուր փոխկապակցվածություն և փոխկախվածություն, որ ակնհայտորեն երևում է նաև հայ-ռուսական հարաբերություններում: Այսպես, օրինակ, կողմերի՝ սերտ պատմական կապերով պայմանավորված համագործակցելու մտադրությունը բերում է այս կամ այն ինտեգրացիոն ձևավորումների, որոնք նպաստում են փոխգործակցության որոշակի սկզբունքների մշակմանը, որոնք ոչ միայն կախված են կողմերի տվյալ հարաբերությունների առանձնահատկությունից, այլև իրենց հետքն են թողնում նրանց հետագա զարգացման վրա և այլն:

Հայ-ռուսական հարաբերությունների առանձնահատկությունն այն է, որ դրանցում կարևոր նշանակություն ունի սուբյեկտիվ տարածությունը՝ ընդհանուր առմամբ ներկայացված ոչ միայն «սուբյեկտիվ Ես-ի» ոլորտով (բարոյական կարգավորիչներով, ներքին վերահսկողության մեխանիզմներով և այլն), այլ նշանակալիորեն նաև «սուբյեկտիվ Մենք-ի» ոլորտով, որում կարևոր տեղ են զբաղեցնում այնպիսի բաղկացուցիչներ, ինչպիսիք են մշակույթների ընդհանրությունը, ընդհանուր պատմական անցյալը, ռազմավարական գործընկերությունը, մարտական եղբայրությունը, դաշնակցային հարաբերությունները և այլն:

Ընդունելով յուրաքանչյուր ոլորտի համարժեքությունը և Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև պար-

<sup>3</sup> Տե՛ս օրինակ, Договор между Республикой Армения и Российской Федерацией о статусе Пограничных войск Российской Федерации, находящихся на территории Республики Армения, и условиях их функционирования от 30 сентября 1992г. Электронный ресурс: [@ps.fsb.ru/international/agreement/text.html?id%3D10320710](http://ps.fsb.ru/international/agreement/text.html?id%3D10320710); Договор между Российской Федерацией и Республикой Армения о российской военной базе на территории Республики Армения 1995г. Электронный ресурс: [http://www.lawrussia.ru/texts/legal\\_673/doc673a332x809.htm](http://www.lawrussia.ru/texts/legal_673/doc673a332x809.htm); Государства – члены ОДКБ в борьбе с терроризмом. Сборник законодательства / под общ. ред. Н. Н. Бордюжи; сост. Т.Н. Москалькова, Ю. Н. Демидов, Д. С. Лютов, С. В. Косилкин. – М.: ТК Велби, Изд-во Проспект, 2007. – 592 с., с.322-323; см. также электронный ресурс: <http://www.odkb.gov.ru/b/azb.htm> и др.

<sup>4</sup> Տե՛ս: Уилбер К. Краткая история всего/ Кен Уилбер; пер.с англ. С.В. Зубкова. – М.: АСТ: Астрель, 2006. – 476 [4] с.: ил.; Уилбер К. Око духа: Интегральное видение для слегка свихнувшегося мира / К.Уилбер/Пер. с англ. В.Самойлова под ред. А. Киселева. – М.: ООО «Издательство АСТ» и др., 2002. – 476. [4]с. – (Тексты трансперсональной психологии).

տավորությունների կատարման հետազոտության գործընթացում դրանք հաշվի առնելու անհրաժեշտությունը՝ այնուամենայնիվ, նշենք, որ կողմերի անվտանգությունն ապահովող պարտավորությունների կատարման համար կարևոր են պարտավորությունների կատարման վերահսկողության ոչ այնքան ամրագրված (կամ պայմանագրերում չարտացոլված) մեխանիզմները, հետադարձ պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը (կամ անհնարինությունը) և նման բաներ, որքան տվյալ համաձայնագրերի առկայությունը, որը զսպող բնույթ ունի պոտենցիալ վտանգի աղբյուր հանդիսացող երրորդ կողմի նկատմամբ: Որոշ չափով, ըստ այս պայմանագրերի, պարտավորություններ են հանդիսանում ոչ այնքան հողվածների կոնկրետ դրույթները (ենթադրենք, ռազմական օգնության տրամադրումը), որքան համաձայնագրի բուն նպատակը (անվտանգության ապահովումը): Այսպիսով, տվյալ միջազգային պայմանագրերն, ըստ էության, կանխարգելիչ միջոցներ են հանդիսանում նրանց ընդհանուր նպատակի ապահովման համար: Եվ հայկական կողմի՝ այլ մասնակիցների հետ նմանօրինակ համաձայնագրերի (ինչպիսին ռուսական կողմի հետ է) բացակայությունը, օրինակ՝ Չվաբական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՉԱՊԿ) անդամների հետ, ևս մեկ անգամ մատնանշում է հայ-ռուսական հարաբերություններում սուբյեկտիվ բաղկացուցիչի դերի կարևորությունը (նման

պայմանագրեր առկա են նաև Թուրքիայի և Ադրբեջանի միջև՝ հիմնված ընդհանուր սոցիո-մշակութային տարածության ազդեցության վրա): Ավելին, նման համաձայնագրերի առկայությունն առանց հզոր հիմքի՝ «սուբյեկտիվ Մենք-ի» ոլորտի, կարող էր նպաստել տվյալ պայմանագրերի արժեզրկմանը, քանի որ դրանց իրավական (օբյեկտիվ) կողմը բավականաչափ մշակված չէ և ոչ արդյունավետ է:

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև ստանձնած պարտավորությունների կատարման առանձնահատկությունները նպաստում են քաղաքական որոշումների իրականացման հարցում կողմերի փոխհարաբերությունների որոշակի ինտեգրալային մոդելի, փոխադարձ պատասխանատվության առանձնահատուկ մթնոլորտի ձևավորմանը: Տվյալ գործընթացի արդյունավետությունը մեծամասամբ կախված է Ք.Ուիլբերտի ինտեգրալային աղյուսակի<sup>5</sup> բոլոր հատվածների գործոնները (այսինքն, քաղաքական, իրավական, տնտեսական և բարոյական) փոխգործակցության տարբեր փուլերում համալիր կերպով հաշվի առնելուց: Տվյալ մոդելի գիտական մշակումը կնպաստի նոր մեխանիզմների զարգացմանը, որոնք գոյություն ունեցողների հետ համատեղ և մեկը մյուսին լրացնելով, կապահովեն կողմերի փոխադարձ պարտավորությունների արդյունավետ կատարումը:

<sup>5</sup> Մանրամասն տե՛ս ըստ: Непомнящий А.В. Введение в интегральную антропологию. Ч.1: Методология знания и методологические основания человековедения: Учебное пособие. – Таганрог: Изд-во ТТИ ЮФУ, 2011. – 196 с.



# ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 84 2014

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ ԳԱՏԱԽԱՉՈՒԹՅՈՒՆ - 96**

- Գ. Գլխավոր դատախազ Գ. Կոստանյանի ելույթը նվիրված Գ. Գլխավոր դատախազության 96-ամյակին..... 2
- Գ. Գլխավոր դատախազի ուղերձը..... 3
- Խորհրդակա..... 4

**ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- Գ. Կոստանյանը մասնակցել է սահմանադրական բարեփոխումների հանրային քննարկմանը..... 12
- Նշանակումներ Գ. Գլխավոր դատախազության համակարգում

**ԵՐԱՆՏԻՔԻ ԽՈՍՔ**

- Գ. Գլխավոր դատախազը պարզևստիկ է Ա. Թամազյանին..... 13
- Շնորհակալական խոսք..... 14

**ՀԱՆԳԻՊՈՒՄ, ՆՇԱՆԱԿՈՒՄ**

- Հանդիպում Ստրասբուրգում..... 15
- Նշանակումներ..... 15

**ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

- Արթուր ՂԱՄԲՐՅԱՆ Դիակը (դիակի մասերը) որպես իրեղեն ապացույց ճանաչելու իրավաչափությունը..... 16
- Սոհիեդդին ՄՈՂԱՄՄԱԴԻ Հանցագործությունը և պատիժը ըստ մուսուլմանական իրավունքի (շարիաթի)..... 25

**ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ**

- Ալիսա ԱՄԻՐԽԱՆՅԱՆ Շահադիտական հանցավորության կրիմինալոգիական բնութագրի որոշ հիմնահարցեր..... 28

**ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

- Սիեր ՄԱՍԱՋԱՆՅԱՆ Միավորվելու սահմանադրական իրավունքի սահմանափակման հիմքերը..... 42

**ՄԵԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

- Հրաչուհի ՍԱՐԳՅԱՆ Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի դերը Հայաստանի Հանրապետությունում աշխատողների աշխատանքային իրավունքների պաշտպանության գործում..... 51

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

- Եկատերինա ԺԻՐԵՆԿՈ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև պարտավորությունների կատարման առանձնահատկությունները միջազգային պայմանագրերի համաձայն..... 61